AZG NEW PDF.qxd 19/08/2010 22:08 Page 1

Ազգ
Azg
20 ՕԳՈՍՏՈՍ 2010 ՈՒՐԲԱԹ 149 (4529)
ISSN: 1829-1651

## Ուելսի Քարդիֆի ամրոցը «ճանաչեց» Ղարաբաղի անկախությունը

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի պատգամավոր Սթիվեն Փաունդը ճանաչողական այցով ժամանել է Ստեփանակերտ: Օգոստոսի 18-ին նրան ընդունել է ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, քննարկվել են «Ղարաբաղի եւ Մեծ Բրիտանիայի խորհրդարանների համագործակցության հարցեր»: Սպասելով այդ համագործակցության կայացմանը, ինչպես նաեւ Ադրբեջանի «սեւ ցուցակի» հերթական թարմացմանը, նշենք, որ այս օրերին Բրիտանիայում՝ Ուելսում եւս մեկ հիշատակում է եղել Ղարաբաղի վերաբերյալ: Ադրբեջանական «ԱՊԱ»-ի տեղեկացմամբ՝ Ուելսի մայրաքաղաք Քարդիֆի ադրբեջանցի բնակիչներից մեկը հայտնաբերել է, որ Քարդիֆի հինավուրց ամրոցից հանվել է Ադրբեջանի դրոշը, փոխարենը ամրոցի վրայից ծածանվում է ԼՂՀ եռագույնը: Հիշյալ ամրոցի վրա կան մի շարք պետությունների դրոշներ, որոնցից մեկը, փաստորեն, արդեն հայկական երկրորդ պետության դրոշն է:

Հ. Ա.

# Դմիտրի Մեդվեդեւն այցելեց Ծիծեռնակաբերդ ու հիացավ Արարատի տեսարանով

Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով օգոստոսի 19-ին պետական այցով տիկնոջ՝ Սվետլանա Մեդվեդեւայի հետ Երեւան ժամանող Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի ինքնաթիռը վայրէջք կատարեց երեկոյան 19:30-ին: «Զվարթնոց» օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին դիմավորում էր Սերժ Սարգսյանը տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ: ՌԴ նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը, տրանսպորտի նախարար, տնտեսական համագործակցության հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Իգոր Լեւիտինը, ՌԴ Հյուսիսարեւմտյան դաշնային շրջանի ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Իլյա Կլեբանովը, Ուլյանովսկի նահանգապետ Սերգեյ Մորոզովը, պաշտոնատար այլ անձինք: ՌԴ նախագահի այցն ու հատկապես Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կնքվելիք ռազմաստրատեգիական պայմանագիրը տարածաշրջանի վերլուծաբանների, փորձագետների, հեղինակավոր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են:



Դմիտրի Մեդվեդեւի առաջին կանգառը Ծիծեռնակաբերդի բարձունքն էր, ուր նա բարձրացավ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի ուղեկցությամբ: Հայոց եղեռնի զոհերի հուշարձանին ծաղկեպսակ դնելու արարողության ժամանակ հնչեց ՌԴ հիմնը, ինչը նշանակում է ողջ Ռուսաստանի խոնարհումը Ցեղասպանության զոհերի հիշատակին: «Հայոց ցեղասպանության թանգարանը եւ հուշահամալիրը 20-րդ դարի սարսափելի ողբերգության վկայությունն են, միաժամանակ հիշեցնում են, որ կյանքն այն գլխավոր արժեքն է, որը քաղաքակիրթ ժողովուրդների կողմից ենթակա է պահպանության»: Այս խոսքերը Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշամատյանի 2008 թ հոկտեմբերի 21-ի Դմիտրի Մեդվեդեւի գրառումն են:

Այդ ժամանակ ՌԴ նախագահը հուշահամալիրի Հիշողության պուրակում ծառ տնկեց ի հիշատակ 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի: Երեկ արդեն նախագահ Մեդվեդեւը ջրեց երկամյա եղեւնին:

Ցեղասպանություն թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը** նախագահին հակիրճ ներկայացրեց հուշահամալիրի կառուցման պատմությունը, պատմություններ գրականությունից, որոնք առնչվում են հայ-ռուսական հարաբերություններին: Նախագահ Մեդվեդեւն էլ անկեղծացավ ու խոստովանեց, որ հիացած է բարձունքից բացվող մայրամուտի հրաշալի պատկերով եւ Արարատի տեսարանով:

ՌԴ նախագահի այցի շրջանակներում նախատեսվում է Հայաստանում ռուսական 02-րդ ռազմաբազայի ներկայությունը մինչեւ 2044 թ.-ը երկարաձգելու արձանագրության ստորագրումը: Այսօր Դմիտրի Մեդվեդեւը կմասնակցի «Պատվո բլուր» զինվորական գերեզմանի հանդիսավոր բացման արարողությանը, ուր ամփոփված են 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմներին մասնակցած ռուս սպաների մարմինները:

Պետական այցի ավարտին ՌԴ նախագահը կմասնակցի նաեւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ-երկրների ղեկավարների՝ օգոստոսի 20-22-ը Հայաստանում անցկացվելիք ոչ պաշտոնական գագաթաժողովին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Ռուսական ռազմաբազայի գործունեության շուրջ հայ-ռուսական պայմանագրի թարմացումը եւ տեղակայման ժամանակի երկարաձգումը ոչ միանշանակ արձագանք է առաջացրել Հայաստանում: Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցությունը լավ գիտակցելով Ռուսաստանի հետ մեր հարաբերությունների կարեւորությունը, հատկապես ազգային անվտանգության եւ ռազմաստրատեգիական տեսանկյունից, այնուամենայնիվ իր մտահոգությունն է հայտնում նման պայմանագրի կնքումը առանց հասարակական լայն քննարկումների: Արմենական-ՌԱԿ-ը բարձր գնահատելով հայ-ռուսական դարավոր հարաբերությունները եւ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված փոխշահավետ սերտ կապերը, այնուամենայնիվ գտնում է, որ հայրենի իշխանությունները նմանատիպ, դարակազմիկ պայմանագիր կնքելուց առաջ պետք է բացատրեին, պարզաբանեին ժողովրդին դրա կարեւորությունն ու անհրաժեշտությունը: Ցավոք սրտի, նման բացատրություններ չհնչեցին, ինչը ջուր է լցնում հակառուսականություն քարոզող շրջանակների ջրաղացին ու նպաստում նրանց ակտիվացմանը:

Արմենական-ՌԱԿ-ը իրատեսական համարելով պայմանագրի կնքումը, միաժամանակ առարկություններ ունի դրա ներկայացման ձեւի եւ ժամկետների վերաբերյալ: Այնուամենայնիվ կուսակցությունը հույս ունի, որ նորացվող պայմանագիրը կնվազեցնի պատերազմի վտանգը եւ կդառնա Ղարաբաղյան հարցի դրական եւ արդարացի լուծման իրատեսական գրավական:

Արմենական-ՌԱԿ
Հանրապետական վարչություն

# Կոնստանտին Զատուլինի ճշմարտությունը

**«Ռուսաստանն իսկապես ցանկանում է նորմալ հարաբերություններ ունենալ Ադրբեջանի հետ, սակայն Հայաստանի հետ մեր համագործակցության մակարդակն անհամեմատ բարձր է», հայտարարել է ԱՊՀ եւ բալթյան երկրների ինստիտուտի տնօրեն Կոնստատին Զատուլինը ռուսական «Պրավդա» պարբերականին: Անվանի գործիչը, որը, հիշեցնենք, Ստեփանակերտ պարբերաբար այցերի պատճառով, «անցանկալի անձ է» Ադրբեջանում, ընդգծել է, որ Ադրբեջանում շարունակում է գերիշխող լինել «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը, որտեղ Մոսկվան տեղ չունի: «Բաքուն իրեն տեսնում է Թուրքիայի հետ սերտ կապակցված», նշել է Զատուլինը: Իսկ հայ-ռուսական հարաբերությունների մասին խոսելիս՝ նա նշել է. «Ադրբեջանի խանդն այս հարցում նրանց կանխակալ վերաբերմունքի արդյունքն է: Այո, Մոսկվան Հայաստանին օգնություն է տրամադրում, սակայն դրանից նաեւ օգուտներ է քաղում. ռուսական ներդրումները հայկական տնտեսության մեջ ամենեւին էլ նվիրատվություններ չէին: Ռուսաստանը լուրջ հետաքրքրություններ ունի հայկական ընդերքի մշակման մեջ, ինչպես նաեւ՝ գունավոր մետալուրգիայի ոլորտում: Ինչպես հայտնի է, ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանը հարուստ է մետաղներով»:**



**Վերջում ԱՊՀ եւ բալթյան երկրների ինստիտուտի տնօրենը զուգահեռներ է անցկացրել Հայաստանի եւ Ադրբեջանի կենսամակարդակների միջեւ: Զատուլինը այն եզրահանգմանն է եկել, որ չնայած Բաքուն անհամեմատ մեծ տնտեսական հնարավորություններ ունի, սակայն «Հայաստանի բնակիչների կենսամակարդակը շատ ավելի բարձր է. այդ երկրում հարստության վերաբաշխման մեխանիզմներն ավելի արդար են, բացի այդ, պակաս կարեւոր չէ, որ հայ ժողովուրդը բավական ձեռներեց է, պատահական չէ, որ Հայաստանում ակտիվորեն զարգանում է փոքր եւ միջին բիզնեսը», եզրափակել է Զատուլինը:**

Հ. Ա.

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ**

## Ծիսական հանձնախումբը գումարեց անդրանիկ ժողովը

**Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր տնօրինությամբ ստեղծված ծիսական հանձնախումբը՝ կազմված Ամենայն հայոց կաթողիկոսության, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի հայոց պատրիարքության եւ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության ներկայացուցիչներից, օգոստոսի 16-17-ը, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում գումարեց իր անդրանիկ ժողովը:**

**Հայ եկեղեցու ծիսական հանձնախմբի աշխատանքներն ուղղված են Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առաքելության առավել ամրապնդմանն ու արդյունավետ իրագործմանը, ծիսաարարողական կյանքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը եւ ծիսական բարեկարգությանը:**

**Ծիսական հարցերի հանձնախմբի անդամներն են՝ Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանը (համաատենապետ), Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (համաատենապետ), Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը, Գեղամ արքեպիսկոպոս Խաչերյանը, Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, Գրիգոր ծայրագույն վարդապետ Չիֆթճյանը, Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը:**

**Հանձնախումբը քննարկեց մկրտության եւ դրոշմի արարողության միօրինակ տեքստի պատրաստության, խորհրդին առնչված կանոնական-բարեպաշտական ավանդույթների կանոնակարգման հարցեր: Որոշվեց հետագա աշխատանքների համար որպես հիմք ընդունել մկրտության եւ դրոշմի արարողությունների վաղագույն բնագրերը, ինչպես նաեւ ներկայիս գործածության մեջ գտնվող տեքստերը:**

*ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ*

## Առանց ԱՄՆ-ի աջակցության Իսրայելը չի կարող հարվածել Իրանին

### *Իսկ տարածաշրջանում նոր պատերազմի սանձազերծումը չափազանց ռիսկային է լինելու Վաշինգտոնի համար*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ինչպես երեկ տեղեկացրել էինք, ՄԱԿ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Բոլտոնը հայտարարել էր, որ Իսրայելին հաշված օրեր են մնացել Իրանի Բուշեհր քաղաքի ատոմային ռեակտորին հարվածելու համար: «Ջերուսալեմ փոստին» տված հարցազրույցում Բոլտոնը ռեակտորի լցարկումը, որը նախատեսված է օգոստոսի 21-ին, անվանել է Իրանի վիթխարի հաղթանակ: Ի պատասխան Բոլտոնի սադրիչ հայտարարության, Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարության մամուլի քարտուղար Ռամին Մեհմանպարաստը ասել է, որ Թեհրանը Բուշեհրի ատոմակայանի ռմբակոծությունը հավանական չի համարում, բայց ամեն մի հարձակում կստանա կոշտ պատասխան:

Ի դեպ, 1981-ին Իսրայելը ոչնչացրել է Բաղդադի մոտակայքում կառուցվող Օսիրակի ատոմակայանը, իսկ 2007-ին ռմբակոծել է Սիրիայի տարածքը, կասկածելով, թե Հյուսիսային Կորեան այնտեղ միջուկային կենտրոն է կառուցում: Սակայն Իրանը էապես տարբերվում է թե՛ Իրաքից, թե՛ Սիրիայից, ընդ որում՝ ինչպես Իսրայելի, այնպես էլ ԱՄՆ-ի համար: Ինչպիսի մոտեցում էլ ունենա, ներկա փուլում Իսրայելը չի կարող անտեսել ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությունը եւ Իրանի հարցում հակադրվել այն Վաշինգտոնի դիրքորոշմանը, որը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցների կիրառման» հուլիսի 9-ի որոշումից հետո միակողմանի որոշումով խստացրել էր պատժամիջոցները: Նրա օրինակին այնուհետեւ միացել է նաեւ Եվրոմիությունը:

Հատկանշական է, որ «Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցների կիրառման» ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշման առնչությամբ էլ Վաշինգտոնին հաջողվել է ստանալ միջուկային ծրագրի հարցում Թեհրանին անուղղակի աջակցող Ռուսաստանի, ինչպես նաեւ իրանական նավթի խիստ կարիքն զգացող եւ նոր պատժամիջոցներին նախապես հակադրվող Չինաստանի համաձայնությունը:

*Տես էջ 5*

AZG NEW PDF.qxd 19/08/2010 21:33 Page 1



# Աշխատանքի պետական տեսչությունը պատրաստ է վերականգնելու աշխատողների իրավունքները

Աշխատանքային օրենսգրքի սկզբունքային փոփոխությունները օգոստոսի 7-ից արդեն կարգավորում են աշխատանքային հարաբերությունների տարբեր ոլորտները: Անցնելով մասնագիտական տարբեր քննարկումների ու վեճերի փուլով՝ օրենսգրքի մի շարք հոդվածներ որոշակիորեն փոփոխվել ու հստակեցվել են:

Ըստ վերջնական տարբերակի, որն օրենքի ուժ է ստացել, ունենք աշխատանքային հարաբերությունների ծագման 2 հիմնական ձեւ: Մի ձեւը գրավոր աշխատանքային պայմանագիրն է, մյուս ձեւը՝ կողմերի համաձայնությամբ գործատուի ընդունած անհատական իրավական ակտը: Այս մասին երեկ «Հենարան» ակումբում տեղեկացրեց աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի ու զբաղվածության վարչության պետ **Թադեւոս Ավետիսյանը**: Նրա փոխանցմամբ՝ սկզբունքային փոփոխությունները վերաբերում են միջին աշխատավարձի հաշվարկման մեխանիզմներին, աշխատանքի էական պայմանների փոփոխությանը, արտաժամյա ու գիշերային աշխատանքի վարձատրության սկզբունքներին, գիշերային աշխատանքի սահմանմանը եւ այլն: «Արտաժամյա աշխատանքի համար սահմանված է 180 ժամ առավելագույն ժամանակ: Այսինքն՝ տարվա մեջ 180 ժամից ավելի գործատուն արտաժամյա աշխատանքում չի կարող ներգրավել աշխատողին, իսկ եթե ներգրավում է, ապա պարտավոր է վճարել նաեւ հավելում», ասաց Թադեւոս Ավետիսյանը: Աշխատանքի պետական տեսչության պետի տեղակալ **Արմեն Սմբատյանն** էլ ավելացրեց, որ նոր աշխատանքային օրենսգրքով գործատուն աշխատողների համար պարտավոր է սահմանել հնգօրյա աշխատանքային ռեժիմ եւ երկօրյա հանգիստ: Բացառություն տրված է միայն հանրակրթության ոլորտին: Ա. Սմբատյանի խոսքով՝ գործատուի խախտումների համար նախատեսված են տույժեր ու վարչական լծակներ, «Եթե գործատուները չեն վերականգնում աշխատողների խախտված իրավունքները, արդեն ստիպված ենք լինում օրենքով սահմանված կարգով տուգանել նրանց», ավելացրեց Ա. Սմբատյանը: Նրա խոսքով՝ հասարակության իրավագիտակցությունը կարիք ունի բարձրացման. «Կոչ եմ անում բոլոր աշխատողներին իրենց իրավունքների խախտման դեպքում դիմել աշխատանքի պետական տեսչությանը: Մենք պատրաստ ենք ընթացք տալ բոլոր դիմումներին»:

Աշխատանքի պետական տեսչությունն այս տարի՝ միայն առաջին կիսամյակում, հայտնաբերել է ավելի շատ չձեւակերպված աշխատողների, քան անցյալ տարվա ողջ ընթացքում:

Ի. Պ.

# Հյուսիս-հարավ երկաթուղու հարցը

## *Քննարկել են Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարն ու «Ռուսական երկաթուղիների» ղեկավարները*

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության հասարակության հետ կապերի բաժնից, երեկ նախարար **Մանուկ Վարդանյանը** ընդունել է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի Հայաստան կատարելիք այցի շրջանակներում Երեւան ժամանած «Ռուսական երկաթուղիներ» ընկերության նախագահի առաջին տեղակալ Վադիմ Միխայլովին եւ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գլխավոր տնօրեն Շեւքեթ Շայդուլինին:

Մանուկ Վարդանյանը առանձնահատուկ կարեւորել է Ռուսաստանի նախագահի այցը Հայաստան, նշելով, որ այն դրական ազդեցություն կունենա երկու երկրների տնտեսական կապերի սերտացման եւ համագործակցության խորացման գործում:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են «Հյուսիս-հարավ» երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորման եւ նախագծման աշխատանքների պատրաստման եւ Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղային հատվածի շինարարության հարցերին:

# Ուսուցիչներն էլ «պրիսյագի օր» կունենան

Արդեն եղել է կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանագիրը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի երդումը հաստատելու մասին»:

«Ես՝ ընտրելով մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության չափազանց պատասխանատու եւ պատվաբեր ճանապարհը, հանդիսավոր երդվում եմ՝ պատվով կրել Ուսուցչի բարձր եւ վեհ կոչումը: Երդվո՛ւմ եմ: Իմ ստացած գիտելիքները, ստեղծագործական ողջ ներուժն ու հոգու ջերմությունն ամբողջությամբ նվիրել երեխաների կրթության եւ դաստիարակության գործին: Երդվո՛ւմ եմ: Երդվում եմ՝ լինել արդարամիտ, բարի, իմ գործին նվիրված եւ այդպիսին էլ դաստիարակել իմ աշակերտներին, ամեն ինչ անել, որպեսզի նրանք մեծ կյանք մտնեն սեփական ժողովրդի եւ Հայրենիքի հանդեպ պատասխանատվության մեծ զգացումով: Երդվում եմ ամեն ինչ անել, որպեսզի մեր երկրի համար դաստիարակեմ բարեկիրթ, հայրենասեր, սեփական ուժերին վստահ քաղաքացիներ: Երդվո՛ւմ ենք: Երդվում եմ՝ բարձր պահել հայ դպրոցի սուրբ անունը: Երդվո՛ւմ ենք»:

Այս՝ մի քիչ խորհրդային, պաթետիկ ոճով գրված տեքստը նախատեսված է ուսուցիչների համար, որպեսզի նրանք չմոռանան, որ դպրոց են մտել ոչ թե փող աշխատելու, այլ գիտելիք փոխանցելու համար: Ու անընդհատ կրկնվող «Երդվում եմ»-ներն էլ երեւի նրա համար են, որ ուսուցիչը պարտավորված լինի կաշառք չվերցնել:

Այնքան կցանկանայի սեպտեմբերի 1-ին հետեւել, թե ինչպես է իմ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչը պատվավոր կերպով երդվելու, որ լինելու է լավագույններից լավագույնը, ամեն ինչ անելու է, որպեսզի մեսրոպատառ հայոց լեզուն փոխանցի նոր սերնդին, բայց մի քանի ամիս անց հերթով բոլոր աշակերտների ծնողներին կանչելու է դպրոց ու ասելու, որ մինչեւ «չմուծեն»՝ գնահատական չի դնելու: Երբ ես էի դպրոցն ավարտում, նա գնացուցակ ուներ, թե որ գնահատականի համար ինչ գումար է անհրաժեշտ, եւ հեչ կարեւոր չէր, որ աշակերտը 10-րդ դասարանում անուն-ազգանունը գրել չէր կարողանում, կարեւորը պապայի քսակն էր. եթե փող կա՝ բարձր գնահատական էլ կլինի: Կարծում եմ՝ նա միակը չէ, ու հանրապետության բոլոր դպրոցներում նման ուսուցիչները շատ են: Եվ դրա մասին բոլորը գիտեն՝ ընդհուպ Արմեն Աշոտյանը:

Որ ուսուցիչները պետք է սեպտեմբերի 1-ին երդվեն, չի նշանակում, թե կրթության ոլորտում խնդիրները կլուծվեն: Լինելով մասնագիտությամբ բժիշկ՝ Աշոտյանը պետք է քաջատեղյակ լիներ, որ Հիպոկրատի երդումը հազարավոր բժիշկների համար որեւէ նշանակություն չունի, փող կա՝ կվիրահատենք, պետպատվերի շրջանակում պետք է բուժումն անցկացվի, նշանակում է՝ կարելի է հիվանդին «մասերի արանքով» ստուգել ու, ասենք, երիկամի փոխարեն գրել, որ լեղապարկում քար կա, կամ գլուխն ազատելու համար միանգամից ասել, որ ոչինչ չկա, սովորական մրսածություն է, թեյ խմիր՝ կանցնի: Ու ինչպես բժիշկներն են ցուցամատն ու միջնամատը խաչ անում ու երդումը խախտում, նույնն էլ կանեն մանկավարժները:

Այս ամենն ընդամենը շոու է, ձեւականություն: Եթե Հայաստանի կրթական ոլորտին անտեղյակ մարդը կարդար այս հրամանագիրը, կնախանձեր մեր դպրոցների կարգավիճակին: Այն տպավորությունն է, որ դպրոցն ազգային հիմքերի վրա է, օտարալեզու դպրոցներն այլեւս սպառնալիք չեն, աշակերտներն էլ քննությունների ժամանակ չեն խայտառակվում՝ ցուցադրելով անգրագիտությունը, քննական թեստերն անթերի են, դասագրքերը՝ մատչելի ու գրագետ կազմված, դպրոցում կոռուպցիա ասված հասկացությունը չկա, աշակերտները հարգում են դասարան մտած ուսուցչին, ծնողը ստիպված չի լինում երեխային արտահերթ պարապելու տալ՝ բուհ ընդունելու համար, Բոլոնյան համակարգն ուղղակի անթերի է գործում, ուսուցիչներն ու աշակերտներն արդեն հասկացել են ավագ դպրոց ասվածը, մնացել էր սարի սմբուլը, այսինքն՝ ուսուցիչների «պրիսյագի» կազմակերպումը: Փաստն այն է, որ վերոնշյալ որեւէ խնդիր չի լուծվել, ու հայկական դպրոցը վերածվում է ճահճի: Բայց դա ոչ մեկին չի հետաքրքրում: Ցավոք, սա փաստում է, որ կրթության հիմնախնդրին մեր երկրում որեւէ մեկն ուշադրություն չի դարձնում: Ինձ առավել անհանգստացնում է այն իրողությունը, որ ընդունելության քննության ժամանակ աշակերտը հայոց պատմության քննության ժամանակ ասել էր, որ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1945-ին, իսկ Առաջին համաշխարհային պատերազմը՝ 1994-ին: Կամ՝ հայոց գրերը ստեղծել է Խաչատուր Աբովյանը: Կարծում եմ՝ նախարարին էլ առաջնահերթ սա պետք է մտահոգի, այլ ոչ թե՝ ուսուցիչը երդվում է, թե՝ ոչ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հ. Գ. Պետությունից 32.000 դրամ աշխատավարձ ստացող բժշկին հենց պետությունն է ստիպում երդմնազանց լինել: Նույնը կլինի մանկավարժի պարագայում:**

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

# «Մաքուր հայրենիք» ազգային ծրագրին տրվեց հավանություն

**ՀՀ կառավարության նիստում, որը վարել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, հավանություն է տրվել «Մաքուր հայրենիք» ազգային ծրագրին, որի անհրաժեշտությունը պայմանավորված է երկրում, հատկապես քաղաքային բնակավայրերում տիրող էկոլոգիական/սանիտարական իրավիճակով: Ակնկալվում է, որ ծրագիրը հնարավորություն կտա կատարելագործելու օրենսդրական դաշտը, առավել արդյունավետ օգտագործելու շրջակա միջավայրի մաքրության եւ պահպանման միջոցները, փոփոխելու հասարակության վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Որոշմամբ ՀՀ նախարարությունների եւ գերատեսչությունների ղեկավարներին հանձնարարվել է քսանօրյա ժամկետում ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացնել «Մաքուր հայրենիք» ծրագրի՝ իրենց իրավասություններին վերաբերող միջոցառումներին մասնակցելու ձեւի եւ ֆինանսական միջոցների ներգրավման առաջարկություններ: Վարչապետ Տիգրան Սարգսյանը ընդգծել է ծրագրի կարեւորությունը եւ համոզմունք հայտնել, որ ամեն ոք գիտակցում է, թե ինչ խնդիր պետք է լուծվի: «Շրջակա միջավայրի մաքրության հարցը շատ սուր է դրված Հայաստանում: Ցանկացած ճանապարհով Երեւանից դուրս գալիս կամ մայրաքաղաք մտնելիս տեսնում ենք անտանելի վիճակ», - ասել է վարչապետը եւ հավելել, որ դրությունը շտկելու գործին պետք է լծվեն բոլորը՝ կրթօջախները, տեղական մարմինները, հասարակական կազմակերպությունները: Հանրության վերաբերմունքը պետք է փոխվի, որպեսզի մեր հայրենիքն ավելի մաքուր լինի:**

Մ. Մ.




# Ջրի հարցը լուծվեց հօգուտ մարտունեցիների

**Գեղարքունիքի մարզի 5 գյուղերի՝ Մադինա, Վերին եւ Ներքին Գետաշեններ, Գեղհովիտ եւ Վաղաշեն, անապատացման վտանգ առայժմ չի սպառնում:**

**ՀՀ նախագահին առընթեր Սեւանա լճի հիմնահարցերով հանձնաժողովի վերջնական եզրակացության եւ բնապահպանության նախարարությանն ուղարկած նամակի համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Արգիճի գետի Գայլաձոր վտակից Վայոց ձորի Աղնջաձոր համայնք ոռոգման նպատակով պետք է թույլ տրվի ընդամենը 20-25 լ/վրկ ջուր տեղափոխել:**

**Շուրջ երկու ամիս առաջ Մարտունու շրջանի վերոնշյալ 5 համայնքների ներկայացուցիչներ մեծ աղմուկ էին բարձրացրել եւ փակել Երեւան-Սեւան մայրուղին՝ պահանջելով դադարեցնել վտակի վրա ընթացող շինարարական աշխատանքները: Ըստ գյուղացիների՝ վտակի հունը փոխում էին Եղեգնաձորում հէկ կառուցելու համար: Գյուղացիները դժգոհում էին, որովհետեւ գետի հունի փոփոխման պարագայում շուրջ 30.000 բնակիչ կմնար առանց ջրի:**

**Աղմուկին հետեւեց բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի որոշումը՝ ստեղծել աշխատանքային խումբը, որտեղ, սակայն ընդգրկված չէին ոչ տեղի բնակիչները, ոչ էլ բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ավելի ուշ աշխատանքային խումբը հայտարարեց, որ վտակի մոտ կատարված շինարարական աշխատանքները կապված են ոչ թե հէկի կառուցման հետ, այլ ոռոգման նպատակով ջուր են տանում Աղնջաձորի համայնք: Այս հայտարարության մեջ զավեշտալին այն է, որ գետի հունի փոփոխման պարագայում ավելի քան 86 լիտր ջուր էր թափվում Վայոց ձոր, ինչը քառակի շատ է, քան Աղնջաձորի ոռոգման համար նախատեսված ջուրը: Այդ համայնքում փաստացի ոռոգվում է 71 հա հողատարածք, որի համար, ըստ մասնագետների, լիովին բավարար է 20-25 լիտր ջուրը:**

**Լուրեր էին շրջանառվում նաեւ, որ գետի հունը փոխում են ջուրը շշալցնելու համար: Գայլաձորը Սեւանա լիճ թափվող ամենառատ, ամենամաքուր ու քաղցրահամ գետն է, հետեւաբար զարմանալի չէ, որ որոշ մարդիկ ցանկանում էին ջուրն օգտագործել սեփական գրպանը հարստացնելու համար, ու կարեւոր չէ 3 տասնյակ հազար գյուղացիների ճակատագիրը:**

**Վերջերս բնապահպանության նախարարությունում կայացել է քննարկում՝ վերոնշյալ համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Նախարարության աշխատանքային խումբն առաջարկել է Աղնջաձորին տալ 39 լիտր ջրառի թույլտվություն, սակայն համայնքների ղեկավարներն առաջարկությունը մերժել են: Առաջարկությունն ուղարկվել է Սեւանա լճի հիմնահարցերով հանձնաժողովին, որն էլ կայացրել է վերջնական որոշում. ջրի հարցը լուծվել է հօգուտ մարտունեցիների:**

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 19/08/2010 21:05 Page 1



Անցուդարձ

# Ինչ է տալիս հայ-ռուսական արձանագրությունը

1995թ. հայ-ռուսական ռազմավարական պայմանագրի բարեփոխում ենթադրող արձանագրությունը՝ թե՛ իր կետերով, թե՛ հնարավոր հետեւանքներով միաժամանակ կմնա հանրային ուշադրության կենտրոնում: Իհարկե, կողմ եւ դեմ փաստարկները, որ այս օրերին հնչում են եւ դեռ կհնչեն, հասարակության մեջ դառնում են լուրջ քննության առարկա: Անշուշտ, իդեալական կլիներ, եթե հասարակական տրամադրությունները կշռադատող եւ քննող միջոցառումներ ձեռք առնվեին նախքան փաստաթղթի ստորագրումը, բայց նման ժողովրդավարության մակարդակ Հայաստանում օբյեկտիվորեն դեռ չկա: Ուստի այժմ գործի են անցնում քաղաքական գործիչները: Ամեն ուժ կատարում է իր համապատասխան գործառույթը՝ հիմնականում առանց լուրջ փաստարկների գովերգելով կամ քննադատելով այդ փաստաթուղթը: Կարեւոր է նաեւ չմոռանալ, որ արձանագրությունը առանձին կետով նախատեսում է, որ այն ուժի մեջ կմտնի վավերացման ներքին ընթացակարգերից հետո միայն, ուստի իր խոսքը պետք է դեռ ասի Ազգային ժողովը: Բայց քանի որ լուրջ իմաստային քննարկումներ խորհրդարանում սպասելը կլիներ անհիմն լավատեսություն, ուստի քննարկումների ամբողջ ծանրությունը ընկնում է փորձագիտական նեղ շրջանակների ուսերին:

Նախորդող օրերին արդեն իսկ բարձրացվել են որոշակի հարցեր, որոնց արժե անդրադառնալ հաջորդաբար:

**Առաջին.** անշուշտ եւս 34 տարով ռուսական ռազմաբազայի առկայությունը փոքր-ինչ կդժվարացնի Հայաստանի արտաքին քաղաքականության շարժունակությունը: Շատ է քննարկվել այն հանգամանքը, որ տապալված հայ-թուրքական գործընթացի հետեւանքով Հայաստանին հասցվել է ռազմավարական վնաս: Հայաստանը ունի 3 հիմնական գործընկեր՝ Ռուսաստան, ԱՄՆ եւ ԵՄ: Վերջինս չունի ռազմական անվտանգության ապահովման սեփական մեխանիզմներ՝ հույսը դնելով ՆԱՏՕ-ի վրա, իսկ ԱՄՆ-ը փաստացի չի ցանկանում կամ չի կարող այդ բացը լրացնել, ինչը ակնհայտ դարձավ պետքարտուղար Հ. Քլինթոնի Երեւան կատարած այցի արդյունքներից: Մյուս եւ միակ դաշնակից Ռուսաստանը համաձայնում է լրացնել առկա նարտահրավերը միայն սեփական կանոններով:

**Երկրորդ.** եթե ռուսական շահերը բավարարվում են ռազմակայանի պայմանագրի երկարաձգմամբ, Հայաստանը՝ իրավականորեն պարտադիր ուժ ունեցող փաստաթղթով, հնարավորություն է ստանում ոչ միայն ավելի մատչելի պայմաններով գնել ռուսական զինամթերք, այլեւ անհատույց ստանալ ժամանակակից զինատեսակներ՝ առնվազն մինչեւ պայմանագրի ժամկետի ավարտը՝ 2044թ.:

**Երրորդ.** մի շարք մասնագետներ հարցադրումներ են անում, թե ում հրամանատարությամբ են գործելու ռուսական զորքերը, եթե առաջանա պայմանագրով նախատեսված դեպքերում դրանց օգտագործման անհրաժեշտություն: Թերեւս սա ամենակարեւոր հարցադրումն է: Այստեղ պատասխանը միանշանակ է, եւ բոլոր այլ արձագանքները լոկ քաղաքական շահարկումների առարկա են: Համաձայն ՀՀ սահմանադրության 55(13) հոդվածի՝ պատերազմի կամ դրա սպառնալիքի առկայության դեպքում երկրի նախագահն ինքն է որոշում ընդունում զինված ուժերի օգտագործման մասին, եւ բնականաբար Հայաստանում տեղակայված ռուսական զորքերի հրամանատարությունը նույնպես անցնում է Հայաստանի նախագահին՝ ըստ սահմանադրության: Իհարկե, քաղաքական տեսանկյունից անհրաժեշտ կլինի նաեւ Ռուսաստանի նախագահի համաձայնությունը, բայց այդ որոշումը չի կարող հակասել ՀՀ սահմանադրությանը (սա բնավ անվերապահորեն չի վերաբերում ՀԱՊԿ զորակազմին):

**Չորրորդ.** անկասկած, 4000-անոց ռազմաբազան ֆիզիկապես չի կարող հետ մղել Թուրքիայի հիպոթետիկ հարձակումը, բայց պետք չէ մոռանալ, որ դեռ 1995թ. այդ երկրին զգաստացնելու գործոն է եղել ոչ թե ռուսական բազայի թվաքանակը կամ այնտեղ տեղակայված ռազմական տեխնիկան, այլ այնտեղ ծածանվող ռուսական դրոշը: Այսու՝ նույն զգոնությունը կփոխանցվի նաեւ Ադրբեջանին, քանի որ հայ-ռուսական հարաբերություններում կատարվող այս շեշտմամբ Հայաստանը ամենեւին չի կորցնում իր անկախությունը կամ ինքնիշխանությունը, այլ ընդհակառակը՝ ձեռք է բերում իր կայուն զարգացումը, այդ թվում նաեւ ԼՂՀ անվտանգությունը ապահովելու հավելյալ, արտաքին երաշխիքներ՝ ամենաբարձր հնարավոր՝ միջպետական երկկողմ պայմանագրի մակարդակով, որը զերծ է նաեւ բազմակողմ կազմակերպություններին (այդ թվում՝ ՀԱՊԿ-ին) արդարացիորեն վերագրվող բյուրոկրատական թերություններից: Նրանք, ովքեր վտանգ են տեսնում հայ-ռուսական դաշնակցության չափից դուրս խորացման մեջ, ամենեւին չպետք է մոռանան, որ Հայաստանի օրենսդրությունը բարեփոխվում է եվրոպական, այլ ոչ թե ռուսական մոդելներով, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում շարունակում է աշխատել ԵՄ, այլ ոչ թե ՌԴ խորհրդականների թիմը:

Եվ **վերջում.** բոլոր քննադատներին առաջարկում եմ իրենց ուժերը եւ ռեսուրսները լարել, օրինակ, ԱՄՆ հետ ազատ առեւտրի համաձայնագրի կնքման վերաբերյալ հանրային քննարկումներ ծավալելու՝ ավելի օգտակար գործին:

ԱՎ. ՍԵՄԵՐՋՅԱՆ

ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

# «Մոսկվային վստահել չի կարելի, սակայն առանց նրա աջակցության նույնպես հնարավոր չէ»

**«Եթե ձեզ բռնաբարում է թշնամին, մի՛ դիմադրեք, մի՛ լարվեք, ստացեք առավելագույն հաճույք»: Սա ամերիկյան բանակի կանանց համար կանոնակարգի 6-րդ հոդվածի բովանդակությունն է, մեջբերում է սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը:**

**Նա հայ-ռուսական հարաբերությունները նմանեցնում է այդ կանոնակարգին, որտեղ պայմանականորեն զոհի կարգավիճակում միշտ հայտնվում է Հայաստանը: «Հայկական կողմը երբեք չի կարող մերժել ռուսների որեւէ առաջարկը, հետեւաբար պետք է թուլանալ եւ մաքսիմալ հաճույք ստանալ»: Կնքվելիք պայմանագրի կապակցությամբ սոցիոլոգը պարզել է հասարակության տրամադրությունը: «Երկրի արտաքին տնտեսական կապերը ո՞ր ուղղությանն եք կապում» հարցին մեծամասնությունը նշել է ռազմական անվտանգությունն ենք ապահովում, ինչը ես համարում եմ սխալ: Առավել ծայրահեղ տրամադրվածները բացասական են գնահատում ՌԴ նախագահի այցելությունն ու ստորագրվելիք պայմանագիրը համարում կոմպլեմենտար քաղաքականության վերջը: Եթե մինչ այսօր փորձում էինք հավասարակշռել մեր հարաբերությունները ՌԴ-ի, Արեւմուտքի հետ, ապա այս պայմանագրով վերջ ենք դնում հավասարակշռությանն ու դառնում Ռուսաստանի կցորդը», նշում է նա: Բնապահպանը համոզված է, որ պայմանագրի ժամկետի երկարաձգումը չի նշանակում մեր լիարժեք անվտանգության գրավական: «Պետք է հաշվի առնենք մեր պատմական փորձն ու գնահատենք դարերի ընթացքում Ռուսաստանի վարած վարքագիծը»:**



**Ռուսաստան անունը: Սոցիոլոգը հիշում է, որ 1991-ին հասարակության 60 տոկոսը դեմ էր ԽՍՀՄ կազմից դուրս գալուն:**

**Հանրային խորհրդի անդամ, բնապահպան Կարինե Դանիելյանի ներկայացմամբ՝ մեր տարածաշրջանը գլոբալ շահերի բախման թնջուկ է: «Եթե այսօր ինքնիշխան պետություն ենք, նշանակում է՝ կարողացել ենք ճիշտ կողմնորոշվել, սակայն կորցրել ենք մեր տարածքի զգալի մասը, ուրեմն այնքան էլ լավ չենք կողմնորոշվել», ասում է նա եւ հղում կատարելով պատմությանը հիշեցնում, որ Ռուսաստանը միշտ եղել է Հայաստանի կողքին, սակայն ճակատագրական պահին լքել է, դավաճանել: Հետեւաբար հույսը դնել Մոսկվայի վրա ու հանգիստ ապրել՝ սխալ է: Հասարակության հետ շփումներից բնապահպանը պարզել է, որ ռազմակայանների կապակցությամբ մի քանի տեսակետ կա: «Կա չափազանց դրական տեսակետ, որ այդ պայմանագրով մեր**

**Սոցիոլոգն էլ ասաց, որ պատմությունից դասեր չենք քաղում ու միշտ հայտնվում ենք կոտրած տաշտակի առաջ մեր միամտության պատճառով: «Անընդհատ հավատացել եւ այսօր էլ հավատում ենք, սակայն այլ տարբերակ նույնպես չկա»: Ադիբեկյանը հավելում է, որ պայմանագրի ժամկետի երկարաձգումը մտահոգիչ փաստ է, սակայն հասարակության շրջանում ըմբոստություն չի նկատվում, որովհետեւ նախ լայն զանգվածները տեղեկացված չեն, բացի այդ՝ յուրաքանչյուր երրորդ հայ ընտանիքի անդամներից գոնե մեկն աշխատում է Ռուսաստանում, հետեւաբար յուրաքանչյուր կապ Ռուսաստանի հետ գնահատում են դրական:**

**Կարինե Դանիելյանը հավելեց, որ հասարակության շրջանում ըմբոստություն չկա, որովհետեւ կարծում են, որ կնքվելիք պայմանագիրը չարյաց փոքրագույնն է:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Լավրովի 100-տոկոսանոց վստահությունն ու C300-ի ապագա սեփականատերը

Ռուսաստանը, ի դեմս արտաքին գերատեսչության ղեկավարի, կոնկրետ որեւէ պատասխան չունի ինչպես Ադրբեջանին զենիթահրթիռային C300 համալիրներ վաճառելու մտադրության հավանականության, այնպես էլ ադրբեջանական ռազմատենչ հռետորաբանությունը սանձելու հարցերին:



Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովը**, պատասխանելով Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններին ու պահվածքը սանձելու հարցին, բավարարվել է նշելով, որ Ռուսաստանը հստակորեն ընդգծում է հակամարտության խաղաղ լուծման այլընտրանք չունենալու հանգամանքը: Ըստ որում, Լավրովի ներկայացմամբ, Ռուսաստանը պատրաստ է երաշխավոր լինել ամեն մի լուծման, որ ընդունելի կլինի հակամարտության բոլոր կողմերի համար:

Ադրբեջանի հրահրիչ հայտարարությունների առնչությամբ էլ Սերգեյ Լավրովը միայն մեկնաբանել է, թե պետք չէ ողբերգականացնել պարբերաբար հնչող հռետորիկան, քանի որ մեծ մասամբ այն կապված է այս կամ այն երկրի ներքաղաքական իրավիճակին, չնայած, «իհարկե, դա գործին չի օգնում»: Ամեն դեպքում, ըստ ՌԴ ԱԳ նախարարի, իրավիճակը «դյուրիններից չէ, այն բարդանում է նաեւ ներմուծվող բազմաթիվ գործոններով, բայց մենք կշարունակենք ջանքերը եւ հավատում ենք, որ կհասնենք առաջընթացի»:

Ինչ վերաբերում է զենիթահրթիռային C300 համալիրներ Ադրբեջանին վաճառելու մասին խոսակցություններին, ապա, թեեւ Լավրովի պատասխանը ուղղակի չէ, սակայն կարելի է ենթադրել, որ Ռուսաստանն, այդուամենայնիվ, կվաճառի այդ համալիրներից Ադրբեջանին: Լավրովն իր պատասխանում նախ հավաստիացրել է, թե C300-ի վաճառքի բոլոր դեպքերում բարձրացող խուճապն անհիմն է, քանի որ «դրանք պաշտպանական սարքավորումներ են, որոնք կոչված են պաշտպանելու համապատասխան տարածքը հրթիռային հարձակումներից»:

Լավրովի հավաստիացմամբ, Ռուսաստանը «երբեք սպառազինություն չի մատակարարում այն տարածաշրջաններ, որտեղ նման մատակարարումը կարող է ապակայունացնել իրավիճակը՝ լինի դա Անդրկովկաս, Մերձավոր Արեւելք կամ այլ տարածք»: Այդուհանդերձ, Լավրովը խորհուրդ է տվել համալիրներն Ադրբեջանին վաճառելու հարցում ինչ-որ առիթներ չփնտրել, թե դա կապակայունացնի տարածաշրջանը:

Հաջորդիվ արտահայտած մտքերն առավել քան հետաքրքրական են. «Պաշտպանական սպառազինությունը չի ապակայունացնում տարածաշրջանը մեկ բացառությամբ. եթե որեւէ մեկը ցանկանում է ուժ կիրառել, ապա այդ սպառազինությունը խնդիրներ կառաջացնի նրա համար: Ես վստահ եմ, որ այն տարածաշրջանում, որի մասին խոսում ենք, ոչ մի պետություն չի ծրագրում ռազմական գործողություններ սկսել, քանի որ դա աղետալի կլինի»:

«Իսկ որ ագրեսորն ամեն դեպքում չի հասնում իր նպատակներին, մենք դրանում համոզվեցինք 2008թ. օգոստոսին, երբ ձեր հարեւան պրն Սաակաշվիլին որոշեց կարգավորել Հարավային Օսիայի խնդիրը այնպիսի մեթոդներով, որոնք ընդունելի չեն միջազգային իրավունքի տեսանկյունից», հայտարարել է Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը: «Ես հարյուր տոկոսով վստահ եմ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ այդպիսի փորձեր չեն լինի, քանի որ, կրկնում եմ, ես մասնակցել եմ նախագահ Մեդվեդեւի՝ նախագահներ Սարգսյանի եւ Ալիեւի հետ հանդիպումներին, եւ բոլոր երեք նախագահները փաստաթղթեր են ստորագրել, որոնք թույլ չեն տալիս ուժի կիրառում...»:

Լավրովը նշել է, որ, մասնակցելով Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ իրականացված Հայաստան-Ադրբեջան նախագահական մի քանի հանդիպումներին, կարող է վկայել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների խոսակցությունը եղել է բաց. «Երկու երկրների նախագահները ազնվորեն ներկայացրել են այն խնդիրները, որոնք հարկ է լուծել հասնելու երկուստեք ընդունելի համաձայնության»:

Այն ժամանակ, երբ հայկական կողմը բանակցությունների հիմք է ներկայացնում մադրիդյան փաստաթղթի թարմացված վերջին առաջարկները, իսկ Ադրբեջանը հերքում դրանց ներկայացումը այն մոտեցմամբ, թե Ռուսաստանի ներկայացրածը չի կարող դիտարկվել որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկ, Լավրովը հարցազրույցում հստակորեն ընդգծել է. «Նախագահ Մեդվեդեւի ձեռնարկած ու ձեռնարկելիք քայլերը ունեն մյուս համանախագահների աջակցությունը»:

«Ե՛վ ամերիկացիները, ե՛ւ ֆրանսիացիները մեկ անգամ չէ, որ համաձայնություն են հայտնել այն գաղափարներին, որոնք մենք ենք առաջարկել: Ամեն դեպքում, մենք այդ գաղափարները «անցկացնում-փորձարկում ենք» համանախագահների հետ, ինչը տեղի ուներ նաեւ Սանկտ Պետերբուրգում վերջին հանդիպման ժամանակ», ասել է Լավրովը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 19/08/2010 20:00 Page 1



# Վարորդական իրավունք՝ մոտ 30 դոլարով

## Թե ինչպես է, որ Վրաստանում մաքսազերծումը կամայականություններով չի որոշվում

Հարավային Կովկասի երկրների համար սովորական է այն գնահատականը, թե այստեղ որեւէ բան երբեւէ նորմալ լինել չի կարող: Ավելի հաճախ էլ մեկս մյուսին նայելով հույս ենք տալիս, թե հարեւանների մոտ էլ իրավիճակը բարվոքությամբ աչքի չի ընկնում: Ու կարծես վատն ընդօրինակելու բացառիկ «ձիրքով» օժտված լինենք, մինչդեռ լավը կրկնելու որեւէ մտադրության չես հանդիպի:

Հայաստանի մաքսային ծառայությունն ու ընդհանրապես ոստիկանական համակարգն ու դրան առնչվող բոլոր հարցերը մարդկանց մեջ արդարացիորեն դժգոհության տեղիք են տալիս. մաքսայինում շատ դժվար է հասկանալ, թե ինչպես ղեկավարվել բազմաթիվ «լուսանցքներ» ունեցող օրենսդրությամբ, ոստիկանությունն էլ ընդհանրապես հավաս չներշնչող կառույց է, որտեղ լավն էլ, վատն էլ նույն դժկամությանն են հանդիպում հասարակության կողմից:

Մի քանի առիթ լրիվ բավարար է, որ, ասենք, Հայաստան դրսից ավտոմեքենա բերող յուրաքանչյուր անձ ուղղակի հիասթափվի ոչ միայն հայաստանյան իշխանություններից, այլեւ







երկրից ամբողջությամբ: Թե ինչպիսին են մեքենան ներմուծելու, մաքսազերծելու ու դրան հաջորդող մյուս գործողությունների ընթացքն ու հերթականությունը, մնում է միայն գուշակել կամ, լավագույն դեպքում, զբաղվել օրենսդրության ուսումնասիրությամբ, այն էլ լուրջ ուսումնասիրությամբ: Նույն անկարգ «կարգն» էլ գործում է վարորդական իրավունք ստանալու պարագայում: Այս երկու գործընթացները միասին կարող են մարդու մեջ ոչ միայն վերացնել մեքենա ունենալու ցանկությունը, այլեւ Հայաստանից հեռանալու հարցում հերթական «խթան» հանդիսանալ:

Իսկ հարեւան Վրաստանում, օրինակ, բնավ էլ խնդրահարույց չեն ինչպես վարորդական իրավունք ստանալը, այնպես էլ մեքենայի մաքսազերծումը, համարանիշ ստանալն ու դրան առնչվող մյուս գործերը: Ավելին, պարզվում է, հարեւան երկրում ոչ մի դուռ թակելու, այդուհետեւ էլ սրա-նրա պահանջող հայացքից ճնշված դրամական կլորիկ միջոցներ «բաժանելու» հարկադիր անհրաժեշտություն չկա:

Ամենից առաջ, Վրաստանում ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվել ու Ռուսթավի քաղաքում գործում է Ծառայությունների գործակալությունը, որտեղ էլ մարդիկ, հայաստանյան չափումներով, անհավատալի արագությամբ կարող են ստանալ ինչպես վարորդական իրավունք, այնպես էլ մաքսազերծել ներմուծած մեքենան: Գործակալությունը հսկայական ու իրապես թափանցիկ ու բաց մի մեծ շենք է տնօրինում, որտեղ ավտոմեքենայի պետհամարանիշներ ձեռք բերելուց մինչեւ վարորդական իրավունք ստանալու համար քննություն հանձնելն այնքան բաց ու տեսանելի է, որ առավելագույնս դժվար կլինի որեւէ մեկի համար «օգնել» հաճախորդին:

Առաջին, անգամ երկրորդ, նույնիսկ երրորդ անգամ տրամադրված բացատրությունից հետո էլ դժվար է հավատալ, որ Վրաստանում վարորդական իրավունք ստանալու քննությունն արժե 40 լարի, իսկ հենց վկայականի տրամադրումը՝ ընդամենը 15 լարի: Այսինքն՝ մոտ 30 դոլարը բավարար է, որ մարդ գնա, հանձնի համակարգչային հիմքով անցկացվող քննությունը, հանձնի նաեւ մեքենա վարելու թեստն ու ստանա վարորդական իրավունքի վկայական: Ընդ որում, քննությունն անցկացվում է մի քանի լեզուներով, այդ թվում՝ հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, բոլոր հարմարությունները ստեղծված են նույն տարածքում, իսկ այդ ամենին տրամադրելիք ժամանակն էլ չի գերազանցելու երկու-երեք ժամը:

Քննությունն ու վարելու թեստը հանձնելուց հետո վարորդական իրավունքի վկայականը կարելի է ստանալ տեղում, մեծ ու բաց սրահում նստած վայելուչ աղջիկներից, որոնց աշխատանքային «կաբինետը» երկար ու թաքստոցային տեղեր չունեցող սեղանն է եւ համակարգիչը:

Նույն այդ տարածքում, հարեւան երկար սեղանին այն անձնակազմն է, որ զբաղվում է մաքսազերծման գանձումներով եւ պետհամարանիշների տրամադրմամբ: Փորձիր, լրջորեն ու ջանասիրաբար փորձիր պատկերացնել, որ արտերկրից ներմուծվող մեքենայի մաքսազերծման համար անհրաժեշտ մաքսատուրքը Վրաստանում կարող եք ազատորեն իմանալ՝ մտնելով համապատասխան ծառայության կայքէջ ու հաշվարկելով շատ պարզ բանաձեւով: Այսինքն՝ Վրաստանի մաքսային ծառայությունները տրամադրվում են ոչ թե իրենց ցանկությամբ ու տրամադրությամբ սահմանվող մաքսազերծման գումարով, այլ բոլորին հայտնի ձեւով:

Վրաստանում մեքենա մաքսազերծելն այնքան արագ ու էժան է կատարվում, որ հնարավորության դեպքում վրացական գրանցմամբ մեքենան հաստատապես նախընտրելի է Հայաստանում մեքենա գրանցելուց, հատկապես որ այդ պարագայում գործ չես ունենա մեր մաքսայինի հետ, ավելին, չես հայտնվի մեքենան գրանցելիս չգիտես որտեղից հայտնվող «ուզվորների» թակարդում:

Վրաստանում մեքենա մաքսազերծելը ոչ թե կարող է արժենալ մեքենան ձեռք բերելու համար վճարած գնի մի զգալի մասը, ընդ որում, ըստ էության, կամայական հաշվարկմամբ, ինչպես Հայաստանում, այլ ամենապարզ ձեւով որոշվող հարաբերակցությամբ: Ասենք, 2005թ. արտադրության մեքենան մաքսազերծելիս, որի շարժիչի հզորությունը երեք լիտր է, մաքսազերծումը կկազմի մոտ 1000 դոլար: Ամեն դեպքում, մաքսազերծման գումարը հաշվարկելիս հաշվի են առնվում մեքենայի արտադրության տարեթիվը եւ շարժիչի հզորությունը, այլ ոչ թե եղբայր-դրացի-բարեկամ կապերը կամ դրանց բացակայությունը:

Վրաստանում մեքենայի մաքսազերծման համար հորեղբոր ու տատ-պապական կապերի հեռավոր ճյուղերին փնտրելու որեւէ անհրաժեշտություն չկա, ու մաքսազերծման գործընթացն էլ շաբաթների փոխարեն տեւում է առավելագույնը մեկ ժամ, կարելի է վստահաբար ասել, որ այս հարցում մեր հարեւանները քաղաքակրթության հասել են, իսկ մենք դեռ գավառամտության խավարում խարխափում ենք, ինչից, ի դեպ, լավ էլ օգտվողներ կան: Այսինքն՝ այն, ինչ Վրաստանում հաճելի գործընթաց է դարձել, մեզանում դեռ նյարդաքայքայիչ ու ծախսատար է, իսկ գործընթացներն իրականացնողների համար՝ «խոպան»:

Այս ամենին մնում է ավելացնել, որ Վրաստանում արդեն մի քանի տարի գործող գործակալության այս շենքը գեղեցիկ ու մաքուր է, ծակուռներ, անհասցե դռներ ու այդ դռներից ներս գտնվող «մաղարիչ» պահանջող մուրացիկներ չունի: Այդ ամենի փոխարեն մեկ ընդհանուր տարածքում են հավաքված անհրաժեշտ ամեն բան՝ քննության հանձնման, մաքսային, բանկային ծառայությունների, դրամի փոխանակման, թեստավորման, համարանիշ ընտրելու, ըստ այդմ վճարելու եւ դրանք անմիջապես ստանալու համար: Ընդ որում, Վրաստանում թույլատրելի է ավտոմեքենայի համարանիշը որեւէ մեկի անունով ստանալու տարբերակը՝ համապատասխան վճարով:

Այս ամենը հեքիաթասացություն չէ, այլ այն ամենի ներկայացում, ինչն այսօր առաջարկում է Վրաստանը ավտոմեքենա ունենալու եւ այն վարելու ցանկություն ունեցողներին: Իսկ Հայաստանում մեքենա ունենալը, վարելը եւ, առավել եւս, հետագայում այն վաճառելու փորձերը զուտ տհաճություն բերող գործընթացներ են: Ու չնայած Վրաստանում, այս ամենի կողքին, նաեւ հավատում են, թե ներքին գործերի նախարարության ապակեպատ նոր շենքը կարող է թափանցիկության երաշխիք լինել, սակայն հստակ է, որ գոնե մեքենաների մաքսազերծման ու վարորդական իրավունք ստանալու հարցում, առանց ապակեպատ շենքի էլ, հաջողվել է կովկասյան բարքերից վեր բարձրանալ:

Տեսնես կգա՞ մի ժամանակ, երբ Հայաստանում էլ կաշի քերթելու փոխարեն կմտածեն մարդկանց ծառայելու մասին...

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Ռուսթավի-Երեւան*

---

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

# Որպեսզի «Խոսրովի արգելոցն» էլ չդառնա Ծաղկաձոր կամ Սեւան

«Խոսրովի անտառ» արգելոցի խնդրի վերաբերյալ բնապահպանական խնդիրներով զբաղվող 45 հասարակական կազմակերպություններ օրերս նամակ են ուղարկել ՀՀ նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին, գլխավոր դատախազին, արդարադատության եւ բնապահպանության նախարարներին՝ պահանջելով վերանայել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքի մի հատվածում «Գիլան» արգելավայր հիմնելու կառավարության որոշումն ու վերականգնել արգելոցի տարածքի ամբողջականությունը:

«Տվյալ որոշումն ընդունվել է Օրհուսի կոնվենցիայի դրույթների կոպիտ խախտումներով: Հաշվի չեն առել մասնագետների եւ հասարակության կարծիքը: «Գիլան» արգելավայրի տարածքը գտնվում է Խոսրովի արգելոցի կենտրոնում, եւ այդ հատվածում կարգավիճակի փոփոխությունը վտանգավոր նախադեպ է դառնում արգելոցի մասնատման համար եւ սկիզբ է դնում «Խոսրովի անտառ» պետական արգելոցի վերացմանը», ասված է նամակում:

Բնապահպանները համոզված են, որ կառավարության որոշումը՝ ստեղծել «Գիլան» արգելավայր, կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկ:

Դաշինքի անդամները հարցը քննարկել են ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի մասնագետների հետ, որոնք նույնպես փաստել են, որ որոշումը հակասում է ՀՀ բնապահպանական եւ միջազգային օրենսդրությանը՝ «Հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» օրենքներին, ՀՀ բույսերի եւ կենդանիների «Կարմիր գրքի» դրույթներին, կենսաբազմազանության պահպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիային եւ մի շարք միջազգային այլ պայմանագրերի, որոնց տակ դրված է ՀՀ ստորագրությունը:

Հակասում է նաեւ GEF, UNDP, WWF եւ այլ միջազգային դոնոր կազմակերպությունների քաղաքականությանը եւ կարող է հարցականի տակ դնել նրանց ֆինանսական աջակցությունը ՀՀ հատուկ պահպանվող տարածքներին եւ հատկապես «Խոսրովի անտառ» պետական արգելոցին ու վնասել դրանց պահպանմանը եւ զարգացմանը:

«Հիասթափված լինելով վերը նշված հույժ կարեւոր խնդրի շուրջը բնապահպանության նախարարության հետ համագործակցության արդյունքներից՝ նախարարությունից խնդիրն անիմաստ չարչրկելուց եւ դրա լուծումը միտումնավոր ձգձգելուց, կառավարությունից պահանջում ենք խնդրին շուտափույթ դրական լուծում տալ», ասված է նամակում:

Հիշեցնենք, որ «Գիլան» արգելավայրում «Հովազաձոր» ՍՊԸ-ն կառուցում է ռեստորան եւ հյուրանոց, նաեւ ... մատուռ: Իսկ մատուռի դիմաց մատաղի համար նախատեսված է շինություն: Այժմ անորոշ ժամկետով շինարարական աշխատանքները դադարեցվել են: Նկատենք, որ անգամ արգելավայրի պարագայում շինությունները պետք է լինեն փայտից կամ բամբուկից, որպեսզի շրջակա միջավայրին վնաս չհասցնեն:

Ինչ վերաբերում է բնապահպանության նախարարությանը, ապա երկարատեւ լռությունից հետո նախարար Արամ Հարությունյանի հրամանով ստեղծվել էր աշխատանքային խումբ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Գիլան» պետական արգելավայրում «Հովազաձոր» ՍՊԸ-ի իրականացրած շինարարական աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով: Սակայն աշխատանքային խմբի ստեղծումը վերոնշյալ դաշինքի անդամները գնահատել են Խոսրովի արգելոցում անօրինական կերպով «Գիլան» արգելավայր ստեղծելու հարցից հասարակության ուշադրությունը շեղելու փորձ, ինչը մտահոգիչ է եւ անթույլատրելի:

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 19/08/2010 20:01 Page 1



# Գյումրու ռազմաբազան՝ գլխացավանք Վրաստանի ու Ադրբեջանի համար

Հայաստան-Ռուսաստան համաձայնագիրը Գյումրու ռազմաբազայի տեղակայման ժամկետի երկարաձգման մասին քննարկման ու դժգոհության առարկա է դարձել Ադրբեջանում, իսկ հարեւան Վրաստանում հետաքրքրական անտարբերությամբ են ընդունում այս իրադարձության լինել-չլինելը, ինչպես, ասենք, Հայաստանին վերաբերող շատ հարցեր են դուրս մնում վրացական օրակարգից ոչ թե անկարեւոր լինելու, այլ ամերիկյան ներհակվածության պատճառով սեփական իրականությամբ գրեթե ամբողջությամբ սահմանափակվածության հետեւանքով:

Ամեն դեպքում, Վրաստանում, Ադրբեջանից առաջ ընկած, փորձագիտական ներկայացվող մակարդակում հայտարարում են, թե Գյումրու ռազմաբազայի տեղակայման ժամկետի երկարացումը լուրջ ուղերձ է ոչ միայն Ադրբեջանին, այլեւ Վրաստանին: Կովկասի հարցերով փորձագետ ներկայացող **Մամուկա Արեշիձեն**, որ Հայաստանն ու հայերին քարկոծելու առիթ բաց չի թողնում, հայտարարել է, թե «ռուսաստանյան ռազմական ուժի ուժեղացումը տարածաշրջանում փաստացի դամոկլյան սուր է Վրաստանի նկատմամբ, որ կարող է օգտագործվել յուրաքանչյուր պահի»: Վրացի «փորձագետը» կարծիք է հայտնել, թե Վրաստանի նկատմամբ «ագրեսիայի դեպքում Հայաստանից հարվածն անխուսափելի կլինի»:

Իսկ ընդհանրապես Հայաստանում ինչ են պատրաստվում ստորագրել՝ առանձնակի չի հուզում վրացական հասարակությանը, հասկապես որ հարեւան երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն միշտ հաջողվում է ուշադրություն կենտրոնացնել այն հարցերին, որոնք բխում են իր շահերից: Մասնավորապես, այս օրերին վրացական մամուլն առավելապես քննարկում է ՎՈՒԱՄ-ի վերակենդանացմանն ուղղված Վրաստանի նախագահի ջանքերն ու այդ կազմակերպությունում Բելառուսի հնարավոր հայտնության հեռանկարը:

Իսկ Ադրբեջանում ինչ տեսակ ասես մեկնաբանում են Ռուսաստանի նախագահի Հայաստան այցելությանը ստորագրելիք փաստաթղթին առնչվող հանգամանքները: Ադրբեջանական տարբեր լրատվամիջոցներին տված հարցազրույցներում ադրբեջանական քաղաքագետներն ու փորձագետները մտավախություններ են ներկայացնում հիշատակված փաստաթղթի ստորագրման առնչությամբ:

Մասնավորապես, քաղաքագետ **Գաբուլ Հուսեյնլին** ստեղծված իրավիճակում առավելապես կարեւորում է Թուրքիայի դերակատարությունը, թե նախկինում Ռուսաստանի ներկայությանը Հարավային Կովկասում ավելի զգույշ մոտեցող Թուրքիան այսօր փոխել է վերաբերմունքը: Ըստ Հուսեյնլու, Անկարան ներկայումս Բաքվի հետ բանակցություններ է վարում Նախիջեւանում ռազմաբազա տեղակայելու առնչությամբ, թեեւ, ըստ քաղաքագետի, հասկանալի է, որ Թուրքիայի համար դժվար կլինի նաեւ բազայի ստեղծման համար բացատրություն տալը:

Միեւնույն ժամանակ, Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու բարձրաձայնած միտքը, թե Ադրբեջանի հետ կարելի է ստեղծել համադաշնություն, քաղաքագետը պատահական գաղափար չի համարել՝ դրանում ներառելով նաեւ Թուրքիային, իբր այդ կերպ հնարավոր կլինի հակակշռել ռուսական ներկայությունը մեր տարածաշրջանում:

Քաղաքագետ **Զարդուշտ Ալիզադեն** ավելի շուտ հակված է ստորագրվելիք համաձայնագիրը «ներքին սպառման որակելուն Հայաստանի համար, իսկ Ռուսաստանի պարագայում այս փաստաթղթի ստորագրումը մեր տարածաշրջանում ռուսական ուժն առավել ցայտուն ներկայացնելու միջոց է»:

**Արիֆ Յունուսն** էլ, հանդես գալով որպես Խաղաղության եւ ժողովրդավարության ինստիտուտի կոնֆլիկտոլոգիայի բաժնի ղեկավար, հայտարարում է, թե Հայաստանը «խանդում է» Ռուսաստանին տարածաշրջանում որեւէ մեկի հետ առավել մոտ հարաբերությունների դեպքում, քան հայ-ռուսականն է:

Ընդհանուր առմամբ, հստակ է, որ Ադրբեջանում սպասվող ստորագրվելիք փաստաթղթով առավելապես ու լուրջ են մտահոգված, ընդ որում, հիմնական շեշտադրումը Թուրքիայի օգնությունն է, որով հույս կա, թե կհակակշռվեն ռուսական ներկայությունն ու ազդեցությունը: Ամեն դեպքում, Ալիեւ կլանի ենթակայությամբ ու անհրաժեշտ տրամաբանությամբ գործող քաղաքագիտական միտքն ու փորձագետները Ադրբեջանում ընդգծում են, թե այս համաձայնագիրը հիմք է տալիս շարունակելու սպառազինությունների մրցավազքը, ինչն, ինքնին, որեւէ լավ բանի չի կարող բերել:

Ա. Հ.

# Վրաստանն ու Իսրայելը կհամագործակցեն, բայց ոչ ռազմական ոլորտում

Երուսաղեմում կայացած Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի եւ Վրաստանի տարածաշրջանային զարգացման ու ենթակառուցվածքների նախարար Ռամազ Նիկոլաիշվիլիի հանդիպումից հետո Իսրայելի արտաքին գերատեսչության ղեկավարը հայտարարել է, որ Թել Ավիվը կհամագործակցի Թբիլիսիի հետ «քաղաքացիական բնագավառում», սակայն հավելել է. «Իսրայելի եւ Վրաստանի ռազմական համագործակցության մասին խոսք լինել չի կարող: Հաշվի առնելով Մերձավոր Արեւելքում եւ Կովկասում տիրող զգայուն իրավիճակը, ռազմական համագործակցության հարցը չի կարող լինել երկկողմ հարաբերությունների օրակարգում»: Լիբերմանը չի մանրամասնել, թե ինչպե՞ս կարող է անդրադառնալ «Կովկասում տիրող զգայուն իրավիճակի» վրա ադրբեջանա-իսրայելական ռազմական համագործակցությունը:

Հ. Ա.

# Առանց ԱՄՆ-ի աջակցության Իսրայելը չի կարող հարվածել Իրանին

*1-ին էջից*

Այս ամենը հիմք էր տալիս ենթադրելու, թե Իրանի ատոմակայանին հարվածելու հարցում Վաշինգտոնը միանշանակ պետք է աջակցի Իսրայելին, բայց առաջին հայացքից միայն:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ իրանական ատոմակայանին հարվածելու հարցում Իսրայելին աջակցելու դեպքում հակաամերիկյան դիմադրությունը նոր թափ է ստանալու Իրաքում: Այնտեղ մեծ ազդեցություն ունեցող Իրանը երկրից դուրսբերման պատրաստվող ամերիկյան զորքերի դեմ է հանելու շիա գրոհայիններին, դուրսբերման որոշակի փուլում այդ զորքերի մի մասը հայտնվելու է պատանդի կարգավիճակում, քանի որ Աֆղանստանում կռվելու համար առաջին հերթին դուրսբերման են ենթարկվելու մարտնչող զինվորները, այլ ոչ թե մարտերում մարտնչող զինվորներին օժանդակ ծառայություն մատուցողները:

Միաժամանակ թալիբների դիմադրություն ընդարձակելու, այդ թվում՝ ամերիկյան զորքերին հարվածելու համար Տաջիկստանից եւ հարակից երկրներից Աֆղանստան են շարժվելու բազմաթիվ արմատականներ, երկրում էլ ավելի է վատթարանալու ԱՄՆ-ի դրությունը: Տարածաշրջանում Իրանի թիրախն են դառնալու ամերիկյան ռազմական օբյեկտները, առեւտրատնտեսական կառույցներն ու կազմակերպությունները: Լիբանանում վերստին ակտիվանալու է Իսրայելի դեմ վերջին պատերազմում շոշափելի հաղթանակ տարած «Հզբոլլահը»: Եգիպտոսում, Հորդանանում, Սաուդյան Արաբիայում եւ ԱՄՆ-ի դաշնակից մահմեդական այլ երկրներում ոտքի են կանգնելու իսլամ արմատականները, այսպիսով, տապալման սպառնալիքի առջեւ են կանգնելու այս երկրների ամերիկամետ իշխանությունները: Եվ վերջապես տարածաշրջանում ԱՄՆ-ը ներքաշվելու է երրորդ պատերազմի մեջ, այն էլ Իրանի պես մի երկրի դեմ, որը տարածքով, բնակչությամբ, տնտեսական, քաղաքական եւ ռազմական կարողություններով մեծապես գերազանցում է ինչպես Աֆղանստանին, այնպես էլ Իրաքին: Էլ չենք խոսում ԱՄՆ-ի համար նոր պատերազմի տնտեսաֆինանսական նոր ճգնաժամով հղի հետեւանքների մասին:

Այսինքն, որքան էլ նախագահ Բարաք Օբաման ենթարկվի ԱՄՆ-ի հրեական լոբբիների եւ Իսրայելի ճնշումներին, հազիվ թե Իրանի հարցում տեղի տա: Ընդհակառակը՝ նա, իր խոստումին համապատասխան, Մերձավոր եւ Միջին Արեւելքում ձգտում է թուլացնել ռազմաքաղաքական լարվածությունը: Սակայն դրա անհրաժեշտ նախապայմանը հենց ԱՄՆ-ում ուժային կենտրոնների ճնշումներից նախագահ Օբամայի ձերբազատվելն է:

Այլ կերպ՝ Բարաք Օբաման «Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցների կիրառման» ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշումով, ապա նաեւ այդ պատժամիջոցները միակողմանի խստացնելով, փորձել է բավարարել ԱՄՆ-ի հրեական լոբբիների ուժային կենտրոնների եւ Իսրայելի պահանջները, որ խուսափի Իրանի դեմ պատերազմից: Իսկ Ռուսաստանն ու Չինաստանը, հավանություն տալով Իրանի նկատմամբ պատժամիջոցներին, փաստորեն պատերազմից խուսափելու հարցում աջակցել են ԱՄՆ-ի նախագահին, այլ ոչ թե երկակի մոտեցում դրսեւորել Թեհրանի նկատմամբ:



# Խամենեի. «ԱՄՆ-ի հետ չենք բանակցի, մինչեւ նա չհրաժարվի սպառնալիքներից եւ պատժամիջոցներից»

**Իրանը միջուկային խնդրի վերաբերյալ ԱՄՆ-ի հետ որեւէ քննարկում չի ծավալի, քանի դեռ Վաշինգտոնը չի վերացրել հակաիրանական պատժամիջոցները եւ չի դադարեցրել սպառնալիքները: Այդ մասին հայտարարել է Իրանի հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեին, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:**

**Նա «հիմարություն» է անվանել Իրանի դեմ ռազմական ուժ կիրառելու սպառնալիքները: «Այդ սպառնալիքների իրականացումը քիչ հավանական է, բայց եթե դա տեղի ունենա, ապա Իրանի ժողովրդի հետ դիմակայությունը կտարածվի մեր տարածաշրջանից շատ հեռու», զգուշացրել է իրանցի ղեկավարը:**

**Խամենեին ընդգծել է, որ Իրանը պատրաստ է բանակցությունների, միայն թե՝ ոչ ԱՄՆ-ի հետ: «Ամերիկացիները չեն կարող նորմալ բանակցել: Դրա համար նրանք պետք է վերջ դնեն գերտերություն խաղալուն, հրաժարվեն սպառնալիքներից եւ վերացնեն պատժամիջոցները: Այդ դեպքում մենք պատրաստ կլինենք բանակցելու ԱՄՆ-ի հետ: Ամերիկան պետք է հասկանա, որ չի կարող ճնշում գործադրել Իրանի վրա... Իսլամական Հանրապետությունը տեղի չի տա որեւէ ճնշման եւ դրան կտա պատշաճ պատասխան», շեշտել է Ալի Խամենեին:**

# ԱՄՆ բանակի վերջին մարտական ստորաբաժանումը հեռացավ Իրաքից

**Օգոստոսի լույս 19-ի գիշերը Իրաքից դուրս է բերվել ամերիկյան բանակի վերջին մարտական ստորաբաժանումը: Այդ մասին հաղորդում է BBC-ն՝ վկայակոչելով ԱՄՆ բանակի ներկայացուցչի հայտարարությունը:**

**Զրահամեքենաների շարասյան ուղեկցությամբ Իրաքից Քուվեյթ է տեղափոխվել ամերիկյան բանակի 2-րդ հետեւակային դիվիզիայի 4-րդ «ստրայկեր-բրիգադի» 4-հազարանոց անձնակազմի մեծ մասը: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով՝ Իրաքում մնացած փոքրաթիվ զինծառայողները վարչական հարցերի կարգավորումից հետո անմիջապես կհեռանան Իրաքից:**

**CNN-ը հաղորդում է, որ ամերիկյան բանակի եւս 6 հազար զինծառայող Իրաքից կհեռանա մինչեւ սեպտեմբերի 1-ը: Ենթադրվում է, որ երկրում մնացող 56 հազար ամերիկացի զինվորականները կզբաղվեն իրաքյան բանակի ուսուցմամբ, ամերիկացի դիվանագետների պաշտպանությամբ եւ չեն մասնակցի մարտական գործողություններին:**

**Իրաքից ամերիկյան զորքի վերջնական դուրսբերումը նախատեսվում է ավարտել մինչեւ տարեվերջ:**



# Ամերիկացիների 1/5-ը Օբամային համարում է մահմեդական

**Ամերիկացիների 15 տոկոսը թյուրիմացաբար կարծում է, թե նախագահ Բարաք Օբաման մահմեդական է: Այդ են վկայում Pew Research Center ընկերության հարցման արդյունքները:**

**Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հիշեցնում է, որ համանման հարցում անցկացվել էր 2009-ի մարտին: Այն ժամանակ նախագահին մահմեդական էր համարել ԱՄՆ բնակչության 11 տոկոսը: Այսպիսով՝ Օբամայի դավանանքի հետ կապված մոլորությունը երկրում հետզհետե ավելի է տարածվում:**

**2010-ի հարցման մասնակիցների միայն 1/3-ը, ավելի ստույգ՝ 34 տոկոսն է իրավացիորեն պատասխանել, որ Օբաման քրիստոնյա է: Անցյալ տարի նրա դավանանքի հետ կապված հարցին ճիշտ պատասխան էր տվել հարցման մասնակիցների 51 տոկոսը:**

**Եթե 2009-ին Օբամայի դավանանքի հարցում չէր կողմնորոշվել ամերիկացիների 34 տոկոսը, ապա այժմ նրանք կազմում են 43 տոկոս:**

**Օբամայի նախընտրական արշավի ժամանակ արվել էին ենթադրություններ, թե նախագահության թեկնածուն գաղտնաբար իսլամ է դավանում, թեեւ հրապարակավ իրեն քրիստոնյա է ձեւացնում: Տվյալ վարկածի հիմքը այն փաստերն են, որ Օբամայի մայրը եղել է աթեիստ, իսկ հայրը՝ մահմեդական: Նախագահի՝ իսլամ դավանելու կոնկրետ ապացույցներ չեն ներկայացվել:**

**Pew Research Center-ի հարցման արդյունքները հրապարակել է նաեւ Fox New հեռուստաալիքը, նշելով, որ պատասխանները ստացվել են ավելի վաղ, քան Օբաման հավանություն է տվել Նյու Յորքում սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների վայրում մզկիթ կառուցելուն:**

**Հեռուստաալիքը նաեւ նշում է, որ Օբամային վերագրվող դավանանքի եւ նրա քաղաքականությունից գոհ լինելու միջեւ գոյություն ունի որոշակի կապ: Նախագահին քրիստոնյա համարող ամերիկացիները դրականորեն են արտահայտվում նրա քաղաքական ուղեգծի մասին: Օբամային մահմեդական համարողները, ընդհակառակը, դժգոհ են նրա վարած քաղաքականությունից:**

# ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն պարգեւին արժանացավ Զավեն Եկավյանը

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության գործունեությանը **«Ազգը»** բազմիցս անդրադարձել է: Հիմնարկության հայկական բաժանմունքը 60 եւ ավելի տարիներ զբաղված է բազմաթիվ ու բազմաբնույթ օժանդակություններ, բարեգործական աջակցություն ցույց տալով սփյուռքահայ դպրոցներին եւ հանրային հաստատություններին ամբողջ Միջին Արեւելքում: Հիմնարկության կրթաթոշակներով սփյուռքահայ ուսանողները կրթություն են ստանում աշխարհի տարբեր բուհերում: Բացի կրթականից, «Գյուլբենկյան» հիմնարկությունն իրականացնում է նաեւ առողջապահության բնագավառում մի շարք ծրագրեր, դրանցում ընդգրկելով նաեւ Հայաստանը: Նրա խնամակալության տակ է գտնվում նաեւ Գյումրիի «Թռչունյան տուն» որբանոցը:



Բազմաթիվ են սփյուռքում եւ Հայաստանում հիմնարկության ֆինանսավորմամբ տպագրվող հայագիտական արժեք ներկայացնող կարեւոր գրքերը, հրատարակվող հուշարձանային արժեք ունեցող հատորները: «Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր Զավեն Եկավյանի ջանքերի շնորհիվ սերտ կապեր ու համագործակցություն է հաստատվել Մատենադարանի, Երեւանի պետական համալսարանի եւ այլ հաստատությունների հետ, իրականացվում են հովանավորչական շարունակական ծրագրեր: Բազմաթիվ են մշակույթի ոլորտում «Գյուլբենկյան» հիմնարկության իրականացրած բարեգործական ծրագրերը:

Երեկ ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանն** ընդունել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն **Զավեն Եկավյանին** ու նրա տիկնոջը՝ Ինգրիդին: Նախարարը պրն Եկավյանին է հանձնել ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալը՝ հայ մշակույթի զարգացման ու տարածման ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի համար:

Նախարարը հանձնելով պարգեւը՝ գնահատանքի խոսքով անդրադարձ կատարեց դոկտոր Եկավյանի հայապահպանության ու երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության հայրենանվեր գործունեությանը, ինչին ի պատասխան դոկտոր Եկավյանի խոսքը հակիրճ էր ու խոսուն. «Արյանս մեջ է, լինելով Լիսաբոնում, միեւնույն է, ես այս ժողովրդի զավակն եմ»: Դոկտոր Եկավյանը շնորհակալությամբ ընդունելով պարգեւը, անմիջապես էլ անցավ գործնական խնդիրներին, առաջարկելով նախարարության հետ ստորագրել համագործակցության համաձայնագիր: Նախարարի կողմից առաջարկը միանշանակ հավանության արժանացավ եւ երկկողմ համաձայնությամբ որոշվեց, որ նախապատրաստվող փաթեթում աջակցության նախապատվությունների թվին կդասվեն հուշարձանների, հրատարակչական ու թարգմանական ոլորտները, մշակութային կրթությունը, անպայման երեխաների գեղագիտական դաստիարակությունը, երաժշտական գործիքների ձեռքբերումն ու ազգային նվագարանների պատրաստումը:

Նախարար Հասմիկ Պողոսյանը հատուկ շեշտելով «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հրատարակչական հսկայածավալ գործունեությունը, առաջարկեց «Երեւանը գրքի 2012 թ. համաշխարհային մայրաքաղաքի» հռչակմանը նվիրված միջոցառումների ծրագրում ներկայանալ հիմնադրամի 700-ից ավել հրատարակությունների ցուցադրությունով:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Զավեն Եկավյանը շնորհակալություն հայտնելով նախարարին հանդիպման ու խնդիրներին գործնական մոտեցում ցուցաբերելու համար, մեկ անգամ եւս փաստեց, որ հիմնարկությունը լինելով միջազգային կազմակերպություն, մեծապես կարեւորում է պետական կառույցների հետ համագործակցությունը՝ որպես վստահելի ու հեռանկարային գործընկերոջ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Էրեբունի» արգելոց-թանգարանը փոխանցվեց Երեւան քաղաքի ենթակայության

Երեկ ՀՀ կառավարության նիստում հավանություն տրվեց փոխքաղաքապետ Կամո Արեյանի առաջարկին՝ «Էրեբունի պատմահնագիտական արգելոց ՊՈԱԿ» թանգարանը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությունից փոխանցել Երեւան համայնքին: «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանը» պետական ոչ առեւտրային կազմակերպություն է, որն իր մեջ ներառում է «Էրեբունի», «Շենգավիթ» եւ «Կարմիր բլուր» պատմահնագիտական հուշարձանները: ՊՈԱԿ-ին ամրացված հիշյալ երեք հուշարձանների պահպանման գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 96,35 հա, իսկ հուշարձանների զբաղեցրած տարածքը՝ 70,73 հա:

**«Ազգը»** զրուցեց «Էրեբունի արգելոց-թանգարանի» տնօրեն **Գագիկ Գյուրջյանի** հետ եւ փորձեց պարզել, արդյոք արգելոց-թանգարանի տարածքում հետագայում ուրծարան, ռեստորան կամ, ինչպես այժմ կոչում են, «էլիտար» շենքեր չե՞ն հայտնվի եւ այդ որոշումը որքանո՞վ նպատակահարմար ու օգտակար կլինի երեք խոշոր պատմահնագիտական վայրերի պահպանման, վերանորոգման եւ լրացուցիչ հետազոտական պեղումներ անցկացնելու համար:



«Գոյություն ունի օրենք, որով այդ տարածքները պատմամշակութային տարածքներ են, դրանք անձեռնմխելի են՝ հատուկ պահպանվող տարածքներ են եւ գտնվում են օտարման ոչ ենթակա հուշարձանների ցանկերի մեջ: Եթե որեւէ մեկը օրենքը խախտի, պատասխանատվություն կկրի համապատասխան սահմանված մեկ այլ օրենքով: Այս երեք հուշարձանները ապահովագրված են «Հուշարձանների պահպանության մասին», «Օտարման ոչ ենթակա հուշարձանների մասին» եւ «Հողային օրենսգիրք» օրենքներով եւ հարձակումներից ապահովագրված են: Իսկ թե ո՞ւմ ենթակայության տակ կլինեն, միեւնույն է՝ գործելու են բոլոր գործող օրենքները:

Դեռ 2009 թ. մայիսի 29-ին նման նախնական մի որոշում եղել է թանգարանը ՀՀ մշակույթի նախարարությունից Երեւան քաղաքին հանձնելու մասին: Այժմ էլ, երբ Երեւանը ունի կարգավիճակ, այդ նախնական որոշումը ընդունվեց կառավարության կողմից: Այսուհետ արգելոց-թանգարանը մնում է ՊՈԱԿ-ի կարգավիճակով, այսինքն պետական ոչ առեւտրային կազմակերպություն եւ չի վերափոխվում՝ Երեւան համայնքի ոչ առեւտրային կազմակերպության, այլ պարզապես կառավարման լիազորություններն են տրվում քաղաքապետարանին», տեղեկացրեց պրն Գյուրջյանը:

Մի քանի տարի առաջ քաղաքապետարանը ցանկացել է միայն «Էրեբունի» թանգարանը վերցնել իր ենթակայության տակ ամենամյա Էրեբունի-Երեւան տոնակատարությունները հենց այդ տարածքում կատարելու համար: Սակայն համաձայն գործող «Հուշարձանների պահպանության օրենքի», հուշարձանները չեն կարող տարանջատվել եւ օտարվել, ուստի երեք բաղադրիչներից բաղկացած՝ «Շենգավիթ», «Կարմիր բլուր» եւ «Էրեբունի» արգելոցները միասին պետք է գործեն եւ մնան պետական կարգավիճակով, ոչ միայն տարածքներով, այլ նաեւ թանգարանային նմուշներով, որոնք համարվում են պետության սեփականությունը:

**«Ազգի»** այն հարցին, չի՞ տուժի արգելոցը նոր մայրուղու կառուցումից, քանի որ, ըստ նախագծի, Կարմիր բլուրի միջնամասով է անցնելու շրջանցող ճանապարհը, պրն Գյուրջյանն ասաց. «Ճանապարհի մի մասը կանցնի էստակադայով (օդային կամուրջ), մի մասի համար էլ շինարարությունը իրականացնողների միջոցներով լուրջ հետազոտական պեղումներ պիտի արվեն, եթե կհայտնաբերվեն հնագիտական արժեքներ, ապա մոտեցումը կփոխվի: Մենք ամեն կերպ փորձելու ենք, որ արգելոցը չտուժի եւ Կարմիր բլուրի ու գերեզմանների միջով անցնող մայրուղին չոչնչացնի որեւէ պատմական, հնագիտական արժեք»:

Ի վերջո, նշենք, որ ՀՀ մշակույթի նախարարությունը համարվում է արգելոց-թանգարանի լիազորված մարմին եւ բոլոր պետական ներդրումները կկատարվեն նախարարության թույլտվությամբ, անկախ նրանից, թե ում ենթակայության տակ է արգելոցը, ով է կառավարման լիազորություններն իրականացնում:

Ս. Ս.

ՎԻԵՆՆԱ

# ՀԲԸՄ կրթաթոշակի արժանացած Անուշ Նիկողոսյանը՝ միջազգային մրցույթի հաղթող

**ՀԲԸՄիության կրթաթոշակի արժանացած, Մյունխենի երաժշտական բարձրագույն ակադեմիայի 3-րդ կուրսի ուսանողուհի երեւանցի 20-ամյա Անուշ Նիկողոսյանը հունիսի 6-ին մասնակցելով Ավստրիայի Կերտներ շրջանում տեղի ունեցած ջութակահարների «Կերտներ Սոպրկասե» միջազգային հեղինակավոր մրցույթին՝ ճանաչվել է լավագույնը եւ արժանացել 10 հազար եվրո գլխավոր մրցանակին: Այս մասին է տեղեկացնում «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հուլիսի 24-ի համարը, հավելելով, որ մրցույթին մասնակցել են 96 տաղանդավոր ջութակահարներ աշխարհի 30 երկրներից, ներառյալ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Անգլիան, Չինաստանը եւ Ճապոնիան:**



**Անուշ Նիկողոսյանը նաեւ արժանացել է ժյուրիի հատուկ մրցանակին՝ առաջին փուլում Մոցարտի կոնցերտի լավագույն կատարման համար: Բացի դրանից, առ ի գնահատանք նրա հրաշալի ելույթի, Վիեննայի սիմֆոնիկ նվագախումբը, աշխարհահռչակ Ֆաբիո Լուիջիի ղեկավարությամբ, երկու համերգի պայմանագիր է ստորագրել նրա հետ: Համերգները տեղի կունենան 2011 թ. փետրվարին: Նա նաեւ 14 այլ հրավերներ է ստացել մասնակցելու տարբեր միջազգային փառատոններին, այդ թվում եւ Ճապոնիայի Սապորո քաղաքի փառատոնին:**

**Անուշը 1995-2003 թթ. սովորել է Երեւանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում: 2005-ին ավարտել է Երեւանի պետական կոնսերվատորիան: Ելույթներով հանդես է եկել Մեծ Բրիտանիայում, Միացյալ Արաբական Էմիրություններում, Սիրիայում, Ռուսաստանում եւ Գերմանիայում:**

Հ. Ծ.

# Սարոյանի անվան թատերգությունների մրցանակաբաշխություն

**Առաջիկա սեպտեմբերի 30-ին Հյուսիսային Գլենդեյլ բուլվարում գտնվող Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցու արեւմտյան թեմի վարչական կենտրոնում տեղի է ունենալու «Հայկական դրամատիկական արվեստների դաշնության» (ՀԴԱԴ) երկրորդ մրցանակաբաշխությունը, որի ընթացքում որոշվելու է, թե «Վիլյամ Սարոյանի անվան լավագույն թատերգության» համար սահմանված 10 հազար դոլարի պարգեւը ո՞ր պիեսին է հանձնվելու:**

**Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի տվյալների, ներկայացված պիեսներից եզրափակիչ փուլ են հասել երեքը՝ Ջոննա Ադամսի «Հռիփսիմեն», Սեւան Գրինի «Մոռացված հացը» եւ Սիլվա Սեմերջյանի «Ուրիշ որդին»: Պատվավոր ժյուրիի անդամներ են որոշված Մարկ Ռեյվնհիլը, Օսկար Յուստիսը եւ Կուրտ Կոլոմբուսը:**

**Ռեյվնհիլը 1990-ականների «Նոր բրիտանական թատրոն» հեղափոխական շարժման առաջնորդներից է: Հեղինակ է մոտ 20 պիեսների, որոնցից հայտնի են «Տեսարաններ ընտանեկան կյանքից», «Կտրվածքը» եւ «Գիտափորձը»: Քննադատական հոդվածներով հանդես է գալիս «Գարդիան» հեղինակավոր թերթում:**

**Յուստիսը 2005-ից Նյու Յորքի Հանրային թատրոնի գեղարվեստական տնօրենն է: Բեմադրել է Պուլիցեր մրցանակի արժանացած «Հրեշտակներ Ամերիկայում» եւ «Կենդանիի ցիկլը», ինչպես նաեւ Թոնի մրցանակի արժանացած «Մազեր» պիեսները:**

**Կոլոմբոսը ճանաչված է իր «Անտիգոնեի երազները», «Փարիզը՝ գիշերով», Դոստոեւսկու «Ոճիր եւ պատիժ», ինչպես նաեւ Չեխովի չորս պիեսների իր բեմադրություններով:**

**«ՀԴԱԴ-ի» Սարոյանի անվան թատերական երկերի մրցանակաբաշխությունը տեղի է ունենում երկու տարին մեկ անգամ Սարոյան հիմնադրամի (տնօրեն Հայկ Մարտիկյան) տրամադրած դրամաշնորհի միջոցով: Նպատակն է հայկական ձայնը հնչեցնել օտարալեզու բեմերից, բացի պիեսներից հիմնադրամը նաեւ կազմակերպում է գրական եւ ֆիլմարտադրության մրցանակաբաշխություններ:**

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Լեոնիդ Ենգիբարյանի թոռը ցանկանում է դառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացի

**«Ազգը»** անդրադարձել է սովետական կրկեսի, էստրադայի եւ կինոյի վարպետ Լեոնիդ Ենգիբարյանի 75-ամյակին նվիրված «Մնջախաղի միջազգային փառատոնին», որին հրավիրվել էր ու ելույթներով հանդես եկավ նաեւ Ենգիբարյանի թոռը՝ Պետեր Պոպպերը: Երեկ 26-ամյա **Պետեր Պոպպերին,** մեծանուն արտիստի բարեկամուհի **Անահիտ Ղափլանյանին** եւ Չեխիայում լույս տեսնող «Օրեր» ամսագրի խմբագիր **Հակոբ Ասատրյանին** ընդունեց ՀՀ սփյուռքի նախարարը:

Ողջունելով հյուրերին նախարար **Հրանուշ Հակոբյանն** իր ուրախությունը հայտնեց, որ Լ. Ենգիբարյանի թոռը ցանկանում է բնակություն հաստատել հայրենիքում: Տկն Ղափլանյանը խնդրեց նախարարին օգնել Պետերին երկքաղաքացիություն ստանալու հարցում: Նախարարը ողջունեց մեծանուն արվեստագետի թոռան ցանկությունը եւ խոստացավ աջակցել ու նաեւ ռուսական լավագույն կրթօջախներից մեկում ուսումնառություն ստանալու համար միջնորդել:

Ս. Ս.

# Գոռ Մինասյանն օլիմպիադայի փոխչեմպիոն



Սինգապուրի ամառային պատանեկան օլիմպիական խաղերում իրենց մրցավեճն ավարտեցին ծանրորդները: Մրցումների կանոնակարգով յուրաքանչյուր երկիր առավելագույնը կարող էր մրցասպարեզ դուրս բերել ընդամենը երկու ծանրորդի: Հայաստանն այդ իրավունքը նվաճել էր վարկանիշային մրցումներում:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, մինչեւ 56 կգ քաշային կարգում Սմբատ Մարգարյանը նվաճել էր բրոնզե մեդալ: Մրցումների վերջին օրը մրցասպարեզ դուրս եկավ գերծանրքաշային Գոռ Մինասյանը: 16-ամյա պատանին 123 կգ անձնական քաշ ունի: Մայիսին Վալենսիայում կայացած Եվրոպայի պատանեկան առաջնությունում Գոռը երկամարտի 340 կգ (155+185) արդյունքով արժանացել էր արծաթե մեդալի: Թեեւ Սինգապուրում նա 10 կգ-ով բարելավեց ցուցանիշը, սակայն կրկին ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով, ինչը եւս մեծ նվաճում է պատանի ծանրորդի համար:

Գերծանրքաշայինների մրցավեճում օլիմպիական չեմպիոնի տիտղոսի համար հիմնական պայքարն ընթացավ Գոռ Մինասյանի եւ իրանցի Ալիռեզա Կազեմինեժադի միջեւ: Վերջինս անձնական քաշով 32 կգ-ով գերազանցում էր հայ ծանրորդին:

Գոռն անհաջող սկսեց մրցումը: Նա միայն 2-րդ փորձից կարողացավ պոկում վարժությունում բարձրացնել պատվիրած նախնական 155 կգ քաշը: 3-րդ մոտեցմամբ Գոռը իրեն ենթարկեց 160 կգ-անոց ծանրաձողը: Այս արդյունքը լավագույնն էր, քանի որ իրանցի ծանրորդը 148 եւ 155 կգ բարձրացնելուց հետո չէր կարողացել իրեն ենթարկել 160 կգ-անոց ծանրաձողը: Սակայն ինչպես հայտնի է, օլիմպիական խաղերում առանձին վարժություններում մեդալներ չեն խաղարկվում, այլապես Գոռը պոկում վարժությունում ոսկե մեդալի կարժանանար:

Թվում էր, թե մրցակցից 5 կգ ավելի բարձրացնելը կնպաստի հայ ծանրորդի ընդհանուր հաջողությանը երկամարտում: Սակայն Մինասյանը շատ անհաջող հանդես եկավ հրում վարժությունում: Միայն 2-րդ փորձից իրեն ենթարկելով 190 կգ-անոց ծանրաձողը, 3-րդ մոտեցման ժամանակ նա չկարողացավ բարձրացնել 195 կգ ծանրությունը: Արդյունքում Գոռը մրցումներն ավարտեց երկամարտի 350 կգ (160+190) արդյունքով: Իսկ ահա իրանցի ծանրորդը հաջորդաբար բարձրացնելով 190 եւ 196 կգ, երկամարտում ցույց տվեց 351 կգ արդյունք (155+196) եւ արժանացավ ոսկե մեդալի: 3-րդ մոտեցման կարիք այլեւս չկար ու իրանցին հրաժարվեց, քանի որ հաղթանակն արդեն ապահովել էր: Բրոնզե մեդալը նվաճեց եգիպտացի Հասան Մոհամեդը՝ 330 կգ (150+180):

Մինչեւ 85 կգ ծանրորդների մրցավեճն ավարտվեց բուլղարացի Գեորգի Շիկովի հաղթանակով: Նա երկամարտում ցույց տվեց 335 կգ (152+183) արդյունք: 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի Ալեքսեյ Կոսովը՝ 334 կգ (154+180): Բրոնզե մրցանակակիր դարձավ ուկրաինացի Կոնստանտին Ռեւան՝ 320 կգ (145+175):

Մինչեւ 77 կգ ծանրորդների մրցումներում օլիմպիական չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Արտյոմ Օկուլովը, որի արդյունքն է 327 կգ (145+182): Նա 16 կգ-ով առաջ անցավ թայլանդցի Չատուպխում Չինավոնգից: Ղազախստանցի Ռուստեմ Սիբայը դարձավ բրոնզե մեդալակիր 285 կգ (130+155) արդյունքով:

Կանանց մրցավեճում 63 կգ-ից բարձր քաշային կարգում չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Օլգա Զուբովան: Նա երկամարտում ցույց տվեց 251 կգ (112+139) արդյունք: Նույնպիսի ցուցանիշ ուներ թայլանդցի Չիտչանոկ Պուսաբկասուլը, որն անձնական քաշով 48 կգ-ով գերազանցում էր Զուբովային: Բրոնզե մեդալակիր դարձավ կորեացի Կուկ Խյան Կիմը՝ 244 կգ (106+138):

# Խոակին Պողոսյանի խաղը տպավորություն չթողեց

Կայացան չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի վերջին 5 հանդիպումները: Հայ ֆուտբոլիստներին ծանոթ Սերբիայի «Պարտիզանը» սեփական հարկի տակ ոչ-ոքի (2-2) ավարտեց հանդիպումը բելգիական «Անդերլեխտի» հետ: Խմբային մրցաշարում հանդես գալու լուրջ հայտ ներկայացրեց Թել Ավիվի «Հապոելը», որը մրցակցի դաշտում 3-2 հաշվով հաղթեց ավստրիական «Զալցբուրգին: Վերջինիս կազմում հանդիպմանը մասնակցած Խոակին Պողոսյանը ոչնչով աչքի չընկավ ու 59-րդ րոպեին փոխարինվեց:

Նախկին ԽՍՀՄ-ի վերջին ներկայացուցիչը՝ Մոլդովայի «Շերիֆը» հյուրընկալվելիս 0-1 հաշվով պարտվեց շվեյցարական «Բազելին»: Հանդիպման ելքը վճռվեց 54-րդ րոպեին, երբ Ստոկերը գրավեց «Շերիֆի» դարպասը:

Բրեմենի «Վերդերը» սեփական հարկի տակ 3-1 հաշվով վստահ հաղթանակ տոնեց իտալական «Սամպդորիայի» նկատմամբ: Բոլոր գոլերը խփվեցին 2-րդ խաղակեսում: Ընդ որում հյուրերը միայն խաղի վերջին րոպեին «թրջեցին» հաշիվը: Պորտուգալական «Բրագայի» եւ իսպանական «Սեւիլիայի» մրցավեճի ելքը վճռեց դաշտի տերերի խաղացող Մաթեուսի խփած միակ գնդակը:

# Պատիժ թմրանյութերի վաճառքի համար



1995-ի գեղասահքի աշխարհի առաջնության մրցանակակիր, ԱՄՆ-ի նախկին չեմպիոնուհի Նիկոլ Բոբեկը պայմանականորեն դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: Գեղասահորդուհին իրեն մեղավոր է ճանաչել թմրանյութերի տարածման համար: Հետաքննությամբ պարզվել է, որ անցյալ տարվա հուլիսին Բոբեկն իր 27 մեղսակիցների հետ թմրանյութերի վաճառքից շաբաթական 10 հազար դոլար է ստացել: Հանցախմբի պարագլուխ Էդվարդ Կրուզը նախորդ շաբաթ 16 տարվա բանտարկության է դատապարտվել:

«Այս վճիռը հնարավորություն կտա ինձ կյանքիս ուղին շրջելու: Գտնում եմ, որ կարող եմ օգնել մարդկանց: Կփորձեմ լիովին ուղղվել», հայտարարել է Բոբեկը դատական նիստից հետո:

# Կալաձեն ցանկանում է տեղափոխվել «Յուվենտուս»

Իտալական «Միլանի» եւ Վրաստանի հավաքականի պաշտպան Կախի Կալաձեն պատրաստ է տեղափոխվել «Յուվենտուս»: Այս մասին ֆուտբոլիստը նշել է վրացական «Լելո» թերթին տված հարցազրույցում: 32-ամյա ֆուտբոլիստը որոշել է փոխել ակումբը: Նա մի շարք առաջարկներ ուներ Իտալիայից, Գերմանիայից եւ Իսպանիայից ու նախընտրեց «Յուվենտուսը»:

Ըստ իտալական լրատվամիջոցների, ներկայումս «Միլանն» ու «Յուվենտուսը» բանակցում են Կալաձեին Ֆաբիո Գրոսոյի հետ փոխանակելու հարցի շուրջը: Կալաձեն նշել է, որ եթե ակումբները համաձայնության գան, ապա ինքը համաձայն է «Յուվենտուս» տեղափոխվել, որի խաղը եւ գլխավոր մարզիչ Լուիջի Դել Ներիի աշխատանքի սկզբունքներն իրեն դուր են գալիս:

ՇԱԽՄԱՏ

# Անաստասյանը զիջեց առաջատարի դիրքը

Աբու Դաբիի շախմատի մրցաշարի 7-րդ տուրից հետո միանձնյա առաջատարի դերը ստանձնեց ուկրաինացի Անտոն Կորոբովը, որն ունի 5,5 միավոր: Ըստ մրցաշարի պաշտոնական կայքի, Կորոբովը սպիտակներով հաղթեց Հովհաննես Գաբուզյանին, որը 4 միավորով նահանջեց 8-րդ հորիզոնական:

Աշոտ Անաստասյանը հաշտություն կնքեց Մոհսեն Շարբաֆի հետ ու 5 միավորով 2-րդ տեղում է: Նրան հաջորդում է Ավետիք Գրիգորյանը, որը հաղթելով Վիտալի Անտոնիոյին, վաստակեց 4,5 միավոր: Նույնքան միավոր ունեն նաեւ Մոհսեն Շարբաֆը, Զուրաբ Ստուրուան եւ Սարհան Ղուլիեւը: Ստուրուան հաշտություն կնքեց Գադիր Հուսեյնովի հետ, Ղուլիեւը հաղթեց Վադիմ Մալախատկոյին:

8-րդ տուրում Անաստասյանի մրցակիցը կլինի Զուրաբ Ստուրուան, Գրիգորյանը կխաղա Շարբաֆի հետ, իսկ Գաբուզյանը կմրցի Սրինաթ Նարայանանի հետ:

# Մխիթարյանը հավասարվեց Միրումյանին

Շախմատի համահայկական օլիմպիադայի հերթական 2 տուրերը զգալի փոփոխություններ մտցրեցին մրցաշարային աղյուսակում մասնակիցների ցուցանիշներում: Ըստ մրցումների պաշտոնական կայքի, աղյուսակը 4-ական միավորով գլխավորում են բրազիլահայ գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը եւ Չեխիան ներկայացնող Վիգեն Միրումյանը: Մխիթարյանը նախ հաղթեց Գեւորգ Հայրապետյանին, ապա ոչ-ոքի խաղաց Միրումյանի հետ, որը նախորդ տուրում միավորը կիսել էր Տիգրան Պետրոսյանի հետ մրցավեճում:

7 շախմատիստներ՝ Դավիթ Հարությունյանը, Յուրի Հայրապետյանը, Տիգրան Պետրոսյանը, Տիգրան Քոթանջյանը, Գոռ Հայրապետյանը, Պողոս Նահապետյանն ու Անդրանիկ Մատիկոզյանը 3,5-ական միավորով հետապնդում են առաջատարներին:

Կանանցից լավագույն արդյունքի են հասել Ուկրաինան ներկայացնող Դիանա Հարությունովան, ՀՀ նախկին չեմպիոնուհի Սիրանուշ Անդրեասյանն ու լիբանանցի Քնարիկ Մուրադյանը, որոնք ունեն 3-ական միավոր:

# Երկրորդ փուլն էլ հաղթահարվեց



Դավիթ Նալբանդյանը հաջողությամբ հաղթահարեց նաեւ Ցինցինատիի թենիսի մրցաշարի 2-րդ փուլը: Նրա մրցակիցն ամերիկացի Ջոն Իսներն էր: Առաջին խաղափուլում, երբ Իսներն առջեւում էր 5-4 հաշվով, ամերիկացի թենիսիստը վնասվածքի պատճառով չկարողացավ շարունակել հանդիպումը: 3-րդ փուլում Նալբանդյանը կմրցի Նովակ Ջոկովիչի հետ: Վերջինս 6-3, 7-5 հաշվով պարտության էր մատնել Վիկտոր Տրոիցկուն:

3-րդ փուլ մտավ նաեւ Ռաֆայել Նադալը, որը պարտության մատնեց ամերիկացի Թեյլոր Դենտին (6-2, 7-5): Պայքարը շարունակում են Ժյուլյեն Բենետոն, Մարկոս Բագդատիսը, Թոմաշ Բերդիխը, Ռոջեր Ֆեդերերը, Ֆիլիպ Կոլշրայբերը, Դավիթ Ֆեռերը, Մարդի Ֆիշը, Ռիշար Գասկեն, Էռնեստ Գուլբիսը, Էնդի Մյուրեյն ու Ռոբին Սոդերլինգը:

# Արսեն Վենգերը մինչեւ 2014-ը կմնա «Արսենալում»

Ֆրանսիացի մասնագետ Արսեն Վենգերը 3 տարով երկարաձգել է պայմանագիրը Լոնդոնի «Արսենալի» հետ: Նա մինչեւ 2014-ի հունիսը կգլխավորի անգլիական թիմը:

«Իմ սիրտը պատկանում է «Արսենալին»: Հույս ունեմ թիմի հետ մրցանակներ շահել: Ինչպես միշտ, լի եմ ուժերով: Նոր պայմանագիր ստորագրելը նշանակում է, որ հավատում եմ երիտասարդ ֆուտբոլիստների ներուժին», հայտարարել է 60-ամյա Արսեն Վենգերը:

Վենգերն «Արսենալի» պատմության մեջ յուրօրինակ ռեկորդակիր է: Նա արդեն 14 տարի գլխավորում է «Արսենալը»: Վենգերը թիմի ղեկը ստանձնել է 1996-ի սեպտեմբերին՝ փոխարինելով Բրյուս Ռիոկին: Նրա գլխավորությամբ «Արսենալը» 7 տիտղոս է նվաճել: 2003/04-ին Վենգերը թիմին չեմպիոնական բարձունքի հասցրեց, ընդ որում «Արսենալը» պարտություն չկրեց:

Ճիշտ է, վերջին տարիներին «Արսենալի» գործերն այնքան էլ հաջող չեն ընթանում: Վերջին հաջողությանը թիմը հասել է 2005-ին՝ դառնալով Անգլիայի գավաթակիր: Նրա գլխավորությամբ թիմն արդեն 13 տարի անփոփոխ մասնակցում է չեմպիոնների լիգայի մրցաշարին: 2006-ին «Արսենալը» հասել էր մինչեւ չեմպիոնների լիգայի եզրափակիչ, որտեղ 1-2 հաշվով զիջել էր «Բարսելոնին»:

«Արսեն Վենգերը տաղանդավոր մարզիչ է: Մենք հավատում ենք, որ երիտասարդ թիմը գլխավոր մարզչին ու երկրպագուներին կուրախացնի նոր տիտղոսների նվաճմամբ», նշել է ակումբի նախագահ Պիտեր Հիլ-Վուդը:

# Ֆաբիանոն հետաքրքրել է «Տոտենհեմին»

Անգլիական «Տոտենհեմը» հետաքրքրվում է իսպանական «Սեւիլիայի» հարձակվող Լուիս Ֆաբիանոյով: Ակումբի նախագահ Դանիել Լեւին թիմի գլխավոր մարզիչ Գարի Ռեդնապին հայտնել է, որ ֆուտբոլիստին գնելու համար պատրաստ է ավելի քան 15 մլն ֆունտ ստեռլինգ հատկացնել:

Նախկինում Ֆաբիանոյով հետաքրքրվում էր նաեւ «Մարսելը», սակայն «Սեւիլիան» ֆուտբոլիստի համար 30 մլն եվրո էր պահանջել: «Տոտենհեմի» հետ գործարքին կարող է խանգարել այն, որ բրազիլացի Ֆաբիանոն շաբաթական 90 հազար ֆունտ ստեռլինգից ցածր աշխատավարձի համաձայն չէ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 19/08/2010 21:36 Page 1



# «Մոսկովյան ակումբի» անդամները

Այն ժամանակ, երբ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ընտանիքով եւ ահաբեկչության դեմ պայքարի կենտրոնի ղեկավարի հետ մեկնում է Մասաչուսեթս՝ հանգստի, Երեւանում տեղի է ունենում Անդրկովկասի համար վճռորոշ՝ հայ-ռուսական ռազմավարական պայմանագրի թարմացման գործընթաց, երկարաձգվում է ռուսական ռազմաբազայի տեղակայումը Հայաստանում, տեղի է ունենում ՀԱՊԿ ղեկավարների ոչ պաշտոնական գագաթաժողով: Առհասարակ ռուս-ամերիկյան «վերաբեռնումը» բավական հետաքրքրական առանձնահատկություններ ունի. «ընկերն» ակտիվանում է այն ժամանակ եւ այնտեղ, երբ եւ որտեղ մյուս «ընկերը քնած է»: Իրաքից, շուտով նաեւ Աֆղանստանից դուրս են գալու ամերիկյան զորքերը (վերջինը՝ համաձայն՝ Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսի հայտարարությունների-Հ. Ա.), Վաշինգտոնը տեւական ժամանակ արդեն չունի դեսպան Բաքվում, Անկարայում, միեւնույն ժամանակ Մոսկվան ռազմաբազաները հիմնավորեց Աբխազիայում եւ Հարավային Օսիայում, Ուկրաինայի հետ պայմանագիր կնքեց՝ Սեւաստոպոլի Սեւծովյան նավատորմի տեղակայման վերաբերյալ, արդիականացրեց կասպյան տորմիղը, կմասնակցի Ադրբեջանում փոքր ՀԷԿ-երի շինարարությանը, եւ վերջապես, այս օրերին էլ՝ մինչեւ 49 տարի երկարաձգեց ռուսական ռազմական ներկայությունը Կովկասում, մասնավորապես Հայաստանում: Այս ֆոնին «նորահայտ գերտերություն» Թուրքիայի հավակնությունները անիրատեսական, նույնիսկ ծիծաղելի են թվում: Անկարան ամեն ինչ անում է ներգրավվելու կովկասյան գործընթացներում, ընդ որում՝ թելադրողի կարգավիճակով, սակայն հաշվի չառնելով, որ պանթուրքական նպատակների հարությունը ոչ Մոսկվայի, ոչ էլ Վաշինգտոնի սրտով չէ: Ռուսաստանը դա չի կարող թույլ տալ, քանի որ առնվազն լուրջ խոչընդոտ կլինի Ռուսաստան-գերտերություն քաղաքականությանը, ԱՄՆ-ը, իսկ նրա հետեւից՝ Արեւմուտքը, ամենեւին էլ չեն խրախուսում մուսուլմանական գործոնի ազդեցության մեծացումը, մանավանդ որ այնտեղ ոչ երկրորդական դեր կարող է խաղալ «բոլորի թշնամի» Իրանը: Այնպես որ թուրքական հավակնությունների անիրատեսությունը, Օբամայի «թողտվությունը» օգտագործելով՝ Մոսկվան կարծես հիմնովին եւ երկարաժամկետ ամրապնդվում է Կովկասում: Հենց այս նպատակով էլ թերեւս, երեկ, առաջին անգամ պետական այցով Հայաստան ժամանեց ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը: Ինչպես հայտարարել է Կրեմլի մամուլի քարտուղարը. «Պետական այցը միջազգային հարաբերությունների բարձրագույն ձեւերից է եւ, սովորաբար, նախագահները այն կատարում են միայն մեկ անգամ՝ իրենց պաշտոնավարման ընթացքում»: ՌԴ նախագահի մամուլի ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ «Նախագահ Մեդվեդեւի Երեւան կատարած այցի կարեւոր հարցերից կլինեն՝ ռուսական ներդրումները՝ Հայաստանի ատոմային էներգետիկայի ոլորտում, արդի պահանջների համապատասխան ատոմակայանի շինարարության մեջ եւ այլն»: Հավելենք նաեւ, որ բացի վերոհիշյալից, հայ-ռուսական բարձր մակարդակի քննարկումների թեմա կարող է լինել նաեւ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը, մեր երկրում նավթամուղ եւ նավթամշակման գործարան հիմնելու ծրագրերը: Եթե այս ամենին գումարենք նաեւ հայ-ռուսական ռազմական գործակցության պայմանագրի թարմացումը, ապա հասկանալի կլինի, որ Մեդվեդեւի պետական այցը ռազմավարական նշանակություն կունենա ոչ միայն Հայաստանի, այլեւ ամբողջ տարածաշրջանի համար:

## ՀԱՊԿ գագաթաժողով

ՀԱՊԿ պետությունների ղեկավարների երեւանյան ոչ պաշտոնական գագաթաժողովում, որը մեկնարկում է այսօր, եւ որին կմասնակցեն կազմակերպության անդամ բոլոր երկրների ղեկավարները, բացի Ուզբեկստանի նախագահ Քարիմովից, որեւէ պաշտոնական փաստաթուղթ չի ստորագրվի. «Նախագահները պարզապես մտքեր կփոխանակեն, առաջարկություններով հանդես կգան, կորոշեն հաջորդ գագաթաժողովը հյուրընկալող երկիրը: Նախագահները որեւէ փաստաթուղթ չեն ստորագրի, քանի որ գագաթաժողովը ոչ պաշտոնական է, փոխարենը կլինեն բազմակողմ եւ երկկողմ մի շարք հանդիպումներ, որոնք միշտ լինում են ՀԱՊԿ գագաթաժողովների շրջանակներում», հայտարարել է ՌԴ նախագահի օգնական **Պրիխոդկոն:** Ընդհանուր առմամբ, վերջինս նշել է, որ նախագահները առաջնահերթ կքննարկեն Ղրղզստանի իրավիճակը, «եւ այն լծակները, որոնք կարող է գործադրել ՀԱՊԿ-ը՝ լուծելու եղած խնդիրները»: Բացի սրանից, ՌԴ ԱԳ նախարար **Սերգեյ Լավրովը** երեկ Հայաստանի Հանրային հեռուստաընկերությանը հայտարարեց, որ «Կայացվել է որոշում՝ ստեղծելու ՀԱՊԿ խաղաղարար ներուժ, եւ այժմ ընթանում է նաեւ այդ ուժերի ձեւավորումը: Հուսով ենք, որ ապագայում մենք կարող ենք ՀԱՊԿ անդամ երկրների նախագահների որոշմամբ ընդգրկվել տարբեր խաղաղարար գործողություններում, որոնք, ի դեպ, կարող են լինել նաեւ ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի մանդատով», հայտարարել է Լավրովը:

## Բաքուն եւ Թբիլիսին դժգոհում են, ռուսները՝ «հանգստացնում բոլորին»

«Թրենդ» գործակալության փոխանցմամբ՝ Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր **Այդին Միրզազադեն** հայտարարել է. «Ռուս-հայկական ռազմական համագործակցության վերաբերյալ թարմացվող փաստաթուղթը բացասականորեն կանդրադառնա ամբողջ տարածաշրջանի վրա: Ռուսական ռազմական ներկայությամբ Երեւանն ավելի պահանջկոտ կդառնա, ինչը լուրջ սպառնալիք կլինի ողջ տարածաշրջանին»: Իսկ վրաց փորձագետ-քաղաքական գործիչներից ոմանք պնդում են, որ ռուսական ռազմաբազայի տեղակայումը Հայաստանում «լուրջ սպառնալիք է ոչ միայն Բաքվի, այլեւ Թբիլիսի համար». «Հայաստանում ռուսական բազան «դամոկլյան սուր» է՝ կախված Վրաստանի գլխին, որը կարող է ամեն պահի օգտագործվել», «Նովոստի Գրուզի»-ին ասել է Կովկասի հարցերով փորձագետ **Մամուկա Արեշիձեն**: Վերջինս նաեւ ընդգծել է, որ եթե 2008-ի ռուս-վրացական պատերազմը վերսկսվի, ապա «Մոսկվան մեզ կհարվածի նաեւ Հայաստանից, իսկ Երեւանի համար շատ դժվար կլինի թույլ չտալ Ռուսաստանին ռազմական նպատակներով օգտագործել իր տարածքը»:

Մինչդեռ ռուս փորձագետները հանգստացնում են բոլորին՝ շեշտելով, որ Հայաստանում ռուսական ռազմաբազայի տեղակայման երկարաձգումը ձեռնտու է ինչպես երկու կողմերին, այնպես էլ ամբողջ տարածաշրջանին: Մոսկվայի քաղաքական եւ ռազմական հետազոտությունների ինստիտուտի փորձագետ **Ալեքսանդր Խրամչիխինը** նշել է. «Այս թարմացմամբ Մոսկվան պահպանում է հզոր, անվճար հենակետ Անդրկովկասում, իսկ Հայաստանը ապահովագրվում է Ղարաբաղի հարցը ուժային ճանապարհով լուծելու հարեւանների փորձերից»: Հետաքրքրական է, ո՞ւմ է նկատի ունեցել Խրամչիխինը «հարեւաններ» ասելով, եթե մեկը, հասկանալի է՝ Ադրբեջանն է, ապա մյուսն ո՞վ է, միգուցե Բաքվի հետ «ռազմավարական փոխադարձ օգնության պայմանագիր» ստորագրած Անկարայի՞ն:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ալեքսանդր Մակեդոնացուն թունավորել են «դժոխային գետի» ջրով

**Սթենֆորդի համալսարանի (Կալիֆոռնիա) գիտնականներին հաջողվել է գտնել մեծ զորավար Ալեքսանդր Մակեդոնացու առեղծվածային մահվան պատճառը: Նրանց կարծիքով, զորավարին թունավորել են այն գետի ջրով, որը, ըստ հին հավատալիքների, արտահոսում էր դժոխքից: Այդ մասին հաղորդում է «Դեյլի թելեգրաֆ» թերթը:**

**Պատմական վավերագրերից հայտնի է. Ալեքսանդրը իրեն վատ է զգացել Բաբելոնում, Նաբուգոդոնոսորի պալատում: Հետագա 12 օրերին նա եղել է հոգեվարքի մեջ՝ կապված լյարդի ահավոր ցավերի եւ տենդի հետ: Կոման սկսվել է բավական արագ, դրան հաջորդել է մահը 33 տարեկանում (մ. թ. ա. 323 թ. հունիսի 10-ին կամ 11-ին):**

**Երկար ժամանակ իշխում էր այն տեսակետը, թե Ալեքսանդրը մահացել է կամ տիֆից, կամ էլ մալարիայից: Թունավորման վարկածը կար, բայց հայտնի չէր, թե ինչով եւ ինչպես են թունավորել: Ամերիկացի գիտնականների կարծիքով, զորավարին թունավորել են Ստիքս դժոխային գետի ջրով:**

**Գետն այսօր էլ գոյություն ունի, հոսում է Պելոպոնես թերակղզու լեռներում եւ կոչվում է Մավրոների («Սեւ ջուր»): Սթենֆորդի փորձագետներն անցկացրել են տեղի ջրի մանրակրկիտ կենսաքիմիական տարրալուծում եւ պարզել են դրանում բացառիկ թունավոր մանրէի գոյությունը: Մանրէն արտադրում է կալիխեամիցին խիստ թունավոր միացությունը: Մարդու վրա կալիխեամիցինի ազդեցությունը լիովին համընկնում է Ալեքսանդր Մակեդոնացու հոգեվարքի նկարագրված ախտանիշներին:**

Պ. Ք.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում կայացած գործարքների մասին

Օգոստոսի 19-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում կայացել է 2320000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 366.70 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Փակման գինը կազմել է 366:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ակսոն>> ԱՁ Բորսայի հարթակում իրականացնելու է <<Ավտոագրեգատների Գործարան>> ԲԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Հողամաս, ընդ. մակերեսը՝ 0,3693 հա: Հասցե՝ ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Բաբաջանյան փող., 110/4: Մեկնարկային գինը՝ 32500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 06.09.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել **www.akson.am**:

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակելի տուն, ընդ. մակ.՝ 225.9 քմ, տնամերձ հողամաս՝ 0.1554 հա, ջրամբար 9.3 քմ եւ 105 քմ գոմ: Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Լեռնագործների փ. 13, բն.. 4: Մեկն. գինը՝ 3200000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 20.09.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<Հայաերոնավիգացիա>> ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Վարչական շենք, ընդ. մակ.՝ 125.5 քմ եւ 0.7833 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Թալին, ԱԱՌԿ Թալին վարչական շենք: Մեկն. գինը՝ 10215600 դրամ:

-Անտենային կայան, ընդ. մակ.՝ 59.9: Հասցե՝ ՀՀ, Աշտարակ համայնք, <<Մուղնի>> թաղ.: Մեկն. գինը՝ 222000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 20.09.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

«**Ազգ**» օրաթերթի օգոստոսի 18-ի համարում տպագրված «**Աքուաթիքս Արմենիա, ինկ**» ընկերության հայաստանյան մասնաճյուղի կնիքի կորստի մասին հայտարարությունը համարել չեղյալ, քանի որ կնիքը գտնվել է:

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների, մշակվում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վարդենիս» ՋՕԸ-ին** ոռոգման նպատակով, մակերեւութային ջրային ռեսուրսից՝ (Լճավանի աղբյուր՝ Ծովակի N1 ջրանք, Մաքենիս գետ, Մասրիկ գետ, Խաչաղբյուրի գետ՝ Վանեւանի ջ/կ, Ակունքի աղբյուր՝ Մասրիկի ջրանք, Մաքենիս գետ՝ Ծովակ N 2 ջրանք, Մասրիկ գետ՝ Սոթքի ջրանք, Կութ գետ՝ Ազատի ջրանք, Այրք գետ՝ Գեղամաբակ-Վարդենիս ջրանք, Այրք գետ՝ Այրքի ջրատար, Ակունքի աղբյուր՝ ՀԷԿ-ի ջրանք, Մասրիկի ջրանք, Խաչաղբյուրի աղբյուրներ՝ ՀԷԿ-ի ջրանք, Ավազանի գետ՝ Ավազանի ջրատար, Լճավանի ջրհան կայան, Մաքենիս գետ՝ Կարճաղբյուրի N 1 եւ N 2 ջրհան կայան, Լճավանի աղբյուրներ՝ Ավերակների, Սարալանջի աղբյուր՝ Սարալանջի ջրանք) Մ. Մասրիկ-147,0 հա-73,7 լ/վրկ, Կարճաղբյուր-145,0 հա-84,9 լ/վրկ, Այրք-125,0 հա-63,0 լ/վրկ, Խաչաղբյուր-76,0 հա-38,1 լ/վրկ, Լճավան-132,0 հա-81,2 լ/վրկ, Նորակերտ-315,0 հա-158,0 լ/վրկ, Լուսակունք-92,0 հա-46.1 լ/վրկ, Վարդենիս-150,0 հա-75,1 լ/վրկ, Ակունք-202,0 հա-101,3 լ/վրկ, Գեղամաբակ-50,0 հա-25,0 լ/վրկ, Կութ-20,0 հա-10,0 լ/վրկ եւ Ազատ-40,0 հա-20,0 լ/վրկ, Սոթք-62,0 հա-31,1 լ/վրկ, Մաքենիս-60,0 հա-30,0 լ/վրկ, Փ. Մասրիկ-20,0 հա-10,0 լ/վրկ, Վանեւան-92, 0 հա-46,2 լ/վրկ, Ծովակ-307,0 հա-153,9 լ/վրկ եւ ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ (գործող խորքային հորեր) Ծովակ-120,0 հա-60,2 լ/վրկ, Վանեւան-15,0 հա-7,5 լ/վրկ, Փ. Մասրիկ-279,0 հա-144,5 լ/վրկ, Արփունք-50,0հա-29,5 լ/վրկ, Շատվան-68,0 հա-34,1 լ/վրկ, Սոթք-16,0 հա-8,1 լ/վրկ, Լուսակունք-72,0 հա-36,1 լ/վրկ, Նորակերտ-110,0 հա-55,3 լ/վրկ, Խաչաղբյուր-63,0 հա-32,0 լ/վրկ, Կարճաղբյուր-50,0 հա-13,0 լ/վրկ, Գեղամասար-55,0 հա-27,6 լ/վրկ եւ Կախակն-12 հա-6,0 լ/վրկ համայնքների նոր ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. օգոստոսի 26-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների, մշակվում է **«Մարտունի» ՋՕԸ-ի** ոռոգման նպատակով, Սեւանա լճից, Երանոս համայնք-238,0 լ/վրկ, Ձոլաքար համայնք-173,0 լ/վրկ, Աստղաձոր համայնք-227,0 լ/վրկ, Վաղաշեն համայնք-123,0 լ/վրկ, Մարտունի համայնք-239,0 լ/վրկ ջրառների ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. օգոստոսի 26-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

*Սարերի զարունը մեկ գավաթի մեջ*

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
և ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

**Մեծածախ գնումների համար զանգահարել** 47-27-20, 47-03-63

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների, մշակվում է **«Մարտունի» ՋՕԸ-ի** ոռոգման նպատակով, Սեւանա լճից, Երանոս համայնք-238,0 լ/վրկ, Ձոլաքար համայնք-173,0 լ/վրկ, Աստղաձոր համայնք-227,0 լ/վրկ, Վաղաշեն համայնք-123,0 լ/վրկ, Մարտունի համայնք-239,0 լ/վրկ ջրառների ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. օգոստոսի 26-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝19.08.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: